

Lkn

206

Հայրապետ Բաղդատ

Համբարձում

17999

ՉՐԻԻՑ

Մի պատկեր գիւղական կեանքից



ԳՐԵՑ

ԵՓՐԵՍ ԱՎՅԱՐԵԱՆՑ

ԹԻՖԼԻՍ
ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ԻՕՏԻՆԵԱՆՅԻ:
1890

ԼԵՌ
206

Չ Ր Ի Ի Ց

Մի պատկեր գիշակյան կեսնիքից

2057.

Հայաստանի Գեղարվեստի Պաշտպանության Կոմիտեի Կենտրոնական Գրասենյակ

Գ Ր Ի Ի Ց

ԵՓՐԵՍ ԱՎԵՍՏԻԱՆՆԵՑ



28205-62 9-

ԹԻՖԼԻՍ
ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՆԻ:
1890

Յ Վ Բ Գ Զ

Մի քանիսն ասում են զի աստի

Дозволено цензурою. Тифлисъ, 29 Августа 1890 года.

Յ Վ Բ Գ Զ

Типографія М. Д. Ротинянца. Гол. прос. д. № 41.

206-60

38. 211

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Գրեթէ ամեն քայլում կը պատահէք դուք Ղարաբաղի գիւղացիներին Բագուի փողոցներում թափառելիս: Այդ գիւղացիները, լսելով, որ՝ իբր թէ Բագուն ամենահարուստ քաղաքներից մինն է, և, թէ այդ քաղաքում շատ հեշտութեամբ կարելի է ձեռք բերել հարստութիւն, — խմբով թափվում են այդտեղ, բայց, ենթարկուելով գանազան զոտարութիւնների, կրկին վերագառնում են գիւղ գանգառներով ու անէծքներով: Այդ աչքի առաջ ունենալով, հրատարակում ենք այս «Գրիւց» վերնագրով գրքոյկը, նախ՝ ցոյց տալու նպատակով նրանց ունեցած կարծիքը Բագուի մասին և երկրորդ փոքր՝ ՚ի շատէ ծանօթացնելու մեր յարգելի ընթերցողներին նրանց խօսակցութեան ձևերի հետ, թէև, շնորհիւ մի քանի գրքոյկների՝ «Պլպուղի», «Արազը տարէն կրտարէ» և «Ալըցէ կնանոց Պընը—փեշակը», ընթերցողը արդէն ծանօթացած կ'լինի:

Ե. ԱՎԵՍԵԱՆՅ:

Իր երախտագէտ ծնողաց՝

Աւագ քահանայ և թագուհի Ավշարեանցներին

ի նշան որդիական սիրոյ նուիրում է

ՀԵՂԻՆԱԿԸ

Զ Ր Ի Ի Ց ¹⁾:

ԿԻԻՔԻ:—Ապա, այ ապա, հենա տունը թակող կայ, գիւտիւմ չըմ թա հուվա:

ՔԷԱՍԻ:—Քինի մին տես, քըմմատաղ:

ԿԻԻՔԻ:—Ապա գիւտիւմըս հուվամ, Խչատոր պելին ա, Պըլտոնանց Կեափին, թայքեղ Մրտիրոսը-մնացածն էլ գիւտիւմ չըմ. հալալ մին սիւրիւ կան:

ՔԷԱՍԻ:—Ա՛կնեդ, ա՛ կնեդ, շիւտ ըրաց մին ըստեղէք հվաքէ սէրուն, օջաղը վառէ, քու ձեռքաւ էլ հալալ զուլալ մին լեաւ հոացած խփի. էտ լօխ մեր բլըմնէնըն: Պա հի՛ նչ ըլին ա Կիւք, քինի մրթվարի, քղըքվարի հմեցէք ըրա. սղաց պա տու հիքըս մին մարթ տունըլեական:

ԿԻԻՔԻ:—Հէսէ, կէամըն, ապա:

ՔԷԱՍԻ:—Պարո՛վ, պարո՛վ, Աթիւն, Մարտիրոս, Կրապետ, Աղաբէդ, Օհանջան, Ըսծատոր, Կէափի, Խչատոր...տղա էտ հինչ լեաւ կըմպընեայըք, հմեցէք, հմեցէք, նստուտեցէք, ծըղ մատաղ, էտ վէր խաչալեա Քէասին մտընէտա ընգալ:

ԹԻԻՆԻ:—Քէաս ախպեր, գիտաս էս հիւր խաչաւեա: Խչատրէն խաչան ա. հէսա իրէք օրա կլեօխս դէանդ ա-ընէս թա-լհա-քինինք Քէաս ախպօրը կոշտը մխրէ գրիւց անինք: Կէախ տեղն էլ էս բլըմնէն պտըհեցէն, թա լհա մունք էլ ընք կէախ:

ՔԷԱՍԻ:—Աթիւն, Աստուծա գիղում, թա վէրչանքըմ ուրխացալ. ամմա քու արենըմ ասում—խմ արեւը, լըհա էս սըհաթէս օղըմի մեր խուխէն ըղարկիւմ ծեր ետնան, մինակ սէրտըս ձաքըմա. էս ծըմովա քշէրնեն էլ էնքան էրկանըն, էնքան էրկան, վէր հիւնչ

¹⁾ յիւ՛ հարկաւոր է արտասանել ինչպէս Գաղղիերէն «Ա».

ասիմ—մեծ պատը ծեղ ըրինակ: Ահապի, տղա պա տու Բէաքի չիր քեցալ, ուրխութիւնաս մուացալըմ թա հրցնիմ, էտ հիբիւս եկալ:

ԿէԱՓԻ:—Հէաս իրէք օրա, Քէաս ախպեր. էնչանք կլեօխա խառնւած ա ըրլալ, քու արեւըմ ասոււմ, կրէցալ չըմ թա վէնըս վէննէս ըւտչքէն տնիմ:

ՔէԱՍԻ:—Չանըտ սաղ ըրնի էաքչի, ըւտեղ վեր ըրնիս-սաղ ըրնիս: Դէ մին նաղլ ըրա տեանամ էսչունք վախտ հինչ շինեցեր Բէաքի, ասըմըն լեաւ շէար ա, հարուստ տեղա, վէսկէն ըվազէն նհէտ վերդեռած ա:

ԿէԱՓԻ:—Էտ լըհա ըրտի ա ընոււմ, Քէաս ախպեր. հեռէ տեղէն լիւն—օղտն շինոււմ: Ըշտեղա ետ վէսկէ, ըրնիի արկաթ էլ չըրիկա: Քէանդվի Բէաքին. կըհվամաս, վեր ասիմ մին օր աչկըս պեց չըմ ըրալ. վեր վըսուեգիւն վչոււմ, վէղը էլ վէչ աչկ, վէչ պրան տեղ չի թողոււմ լցնոււմ: Ընդէղէնը մինակ նօթն ա, ընէլ գիւղոււմ չըս թա էնչանք նօթը թօրնա քընոււմ: հիւրը խուսուցնոււմ ըս քթը պոօշը կախ. մինչի էն մեծ խօզէլիննէն էլ հանցն լըհա ճըտերը կըտորված մէմուննէ ըրնին: Մին խօսքավ տուր չի եկը ինձ էտ քանդվածը. վեր տասսը օր սօված կենաս մինը կէալ չի ասել, թա հոնցս ա-մարթ. ապագ կենա մեր շէնը. օրը անըմըս, օրը օտոււմ, հալալ—գուլալ խըխօցըս քըշտէն նատոււմ:

ԱՂԱԲԷԳ:—Ղօրթա ասոււմ, իմ արեւը:

ՔէԱՍԻ:—Տղա, Ահապի, մին ասէ տեանամ է, էտ նօթը հոնց ա տիւս կէամ:

ԿէԱՓԻ:—Գիւղոււմըս հոնց, Քէաս ախպեր: Հէնա շըհարան խիլա հեռու, հոնց ասիմ, վեր կլխու ընդնիս. ասինք ըստեղան չըքէնը... չըքէնը... Ղալան, մին տեղ կա Բալխանի ըն ասոււմ. վրէր պատառ մուտանըմըս, ըստեղան-ընտեղան պուզտի-պուզտի թօրքու մըրիչիլու մնան տխտակէ գատեր ա ըրէվոււմ, մինակ կլխընէն բիդ-բիդ չի, տըվըկ-տափակ ա. վեր լափ մուտանըմըս, հէնա մին ղօլան տօնըր թօղած, տըռնավը նիըս մըն նոււմ, տեանըմ ըս մեր ջըրվըրներէն մնան վերէր, ըուրիսնէն էլ սերուն պնդըցրած. ըշտեղ էլ վեր եշըմս, նօթա-հու նօթ:

ՔէԱՍԻ:—Քըմատաղ, պա էտ հոնցըն ծակոււմ էտ վերէրը, վեր նօթ ա տիւս-կեամ, մին մըթըվարի ասէ տեանանք է:

ԿէԱՓԻ: Ասիմ դն, լըհա քեցած օրս մինը ծակոււմ ին: Ալալա էնչունք մըշիննէ կա վեր մինը ասիմ, վեր մինը թողիմ: Աւաչ հունց վեր ըսեցէ թօրքու մըրիչիլու մնան խիլա բեցուր գատ ըն շինոււմ. մաչ ղօլան վեր դըբի պեցիր եշըմըս, հէնա ասուէ քլլին մաչ տեղան մին չարխ սղըցրած, էտ չարխավը անցըն կցնոււմ, մին էրկան ըրկաթէ զինջիլ, մին ջօնդը հէնա ղիրավ տըված քաշ ղօլէն մին օրիշ չարխավ, էն մին ջօնդնէլ հէնա կատած մին էրկան ըրկաթէ տուրքու անա ծեր հիւրթին լենքասը, տակնէլ բուրօլու մնան շինած. կլխու ընդէր: Ետնան, վեր էտ քաշ ղօլէ չարխը վուրվէն շօնն տամ, զնջիլը ետ ա տամ. քանէ ետ ա տամ, էն մին ջօնդը քըանոււմ, էնչանք, վըր բըօվէն ջօնդը տափէն ա հանոււմ, ետնան, չորս մարթ, մին թափիւր չորս տանէ, կուռնէս հըստոցավը ըրկըթնէ կա, մին ղօլը մեանդեանու մնան. սղըցնոււմ բուրէն կըլխէն, հու սկսոււմ շօռ տամ, էնչանք շօռն տամ, վեր բուրը մննոււմ վէղէն մաչը. ետնան, վեր չարխը շօռն տամ, բուրը երվըշ-եափաշ տիւս ա կէամ տափան մաչը վէղաւ լիգը, ետնան, հէնա ըրկաթէ տուրքնէ կա, լէնքսը ծակէն լէնքսին մչանք, էրկանքն էլ բուրէն ըրկանքէն մչանք, էտ տուրքնէրան մինը նից ըն կօխոււմ էտ փօսը. ետնան, բուրը զինջիլին ջօնդան ետ ըն անոււմ. հէնա մինքանէ ըրկընէրկան, չորս սուանէ ըրկըթնէ կա, ըտրանց անա մինին ջօնդը զինջիլանն կապոււմ, էն մին ջօնդն էլ էշա բուրէն նհէտ պնդըցնոււմըն, հու ծակը նիցեր կախ տամ. հա, մուռացէ, վեր ասիմ. բուրէն մաչի վէղը վերըն ածոււմ, սերուն թմըգցնոււմ, էշա սկսոււմ շօռ տալ, էնչանք, վեր բուրը էշա վէղաւ լցնոււմ ա, ետնան, բուրը տիւսըն ծնոււմ, մին օրիշ տուրքս սղըցնոււմ էն ծակէն տուրքէն նհէտ պնդըցնոււմ, ետնան, էնչանք թխոււմ էտ տուրքէն, վեր էն սըվթա կօխածը առուէ փօսէն տակն հանոււմ. էլ հինչ կլխնէտ ցվըցնիմ է, էնչունք ըրտի ծակոււմ, վեր նօթէն շարլթիւն ըրեոււմ, հօրէն մաչը թմըցնոււմ, ըռուէին էլ սերուն կապոււմ, ընդետանը հունց վեր ծեր ջըրվէրան ջիւրըք հանըմ, ընդի էլ ընդեղան նօթն հանոււմ: Ամնա հանց վեր ա ըրնոււմ, վեր քանդոււմ տեղը նօթը ինքը-ինքը տիւս ա տեանոււմ: Էտ վերը, վեր իմ քըշտէս քնդեցէն արմացք ար. մին ամէս սեարա-սեար քընդեցէն գատ չի տիւս եկը, վերչը, մին էլ տեանանք, Քէաս ախպեր, նօթը կըտաղած հանց տիւս

ա պրծնում հանց տիւս, վեր հինչ ասիմ. էն տրխտակէ պուզտիւն վրէր ծէփում ար, չըքէնը ըրիքնակնար հսնում:

ՄԸՐՏԻՐՈՍ:— Տղա տու էլ հանց սօտրս ասում, վեր իփած հաւէն ծեծաղը կեա, չրու ըրիքնակը զատ կըինի:

ՔԷՍՍԻ:— Մէարտիրոս, ասել մէ, ըրտի վեր ես ըմ տեսնում շատ զատերա ըինելու. տղա տեսնում չըս ստընօթիւնը վրէրչանք ա շրտացալ ըշխարքէս ըրիքեհն. հէալա վախէ, վեր թեւեր էլ չի շինին էտ փաշիքը թռչին: Էտա է, վեր Աստու զիւլիւմը շրտացալ ա: Հովա գիդացալ, ծրղ մատաղ, նօթը հինչ ա, էն մինը հինչ ա, օջաղը վոթվոթցրալը կուղքերքալը նստօտալ, համ լիւսաւերվալ, համ էլ թքացալ:

ՕՂԱՆՁԱՆ:— Պա լեաւ, Վէափ ախպեր, էտ վրէրչանք վրերէր կա, շատ սն:

ԿԷՍՓԻ:— Մըգեամ էլ վէննը տըինիլի տեղ կն. հիւրիւ ջուբում լըհա էրկու շէահի ա զընդամ, մըինիլ տեսէր, թօլորը ծեռքէն Բարխանի ա վագ տամ, ընդնում տափէն ջանէն. ըստեղ ծակում, ընդեղ ծակում. հանցը ըինում ա, վեր աշխարք փուլ ա խարջում օթ տեղան ծակում, վրէչ մինան էլ զատ չի տիւս կեամ. էլ հինչ ասիմ է, էնչանք ծրկծրկօտալը, վեր Բալխանին տեռալա ճշըքամի.— քամակը տուք գիտացէք:

ԱՂԱԲԷԳ:— Հն, հն, հն, հն... մեռնիս վէչ տու Վէափի, մեղ ծրծաղու կըտուրեցէր. տղա տես հունց էլ սղըցրած ասից է. Բալախանի ճշըքամի հն, հն, հն, հն... էտ Բէնքի ըս սըվերալ ըրտի ըիհամաւ խօսէլը:

ԿԷՍՓԻ:— Պա հինչ. խէչմ ես Բքիւցուց սվըցընում, վեր ես բըղիմ ընդրանց սնա սվէրիմ. հէվան զատեր ըն, ընդրանք ըրտի խօսքերը հինչն զիւղըմ:

ՔԷՍՍԻ:— Լեաւ ա, զեառ զառ խօսել մէ, մին ըեսէլ ասէ — տեսնամ, ա Վէափ. էտ նօթը լըհա սիպտեակ ա տիւս կեամ տօփան, թա հնունց:

ԿԷՍՓԻ:— Ձէ, Քէաս ախպեր, տափան սէվ ա տիւս կէամ:

ՔԷՍՍԻ:— Քըմատաղ, պա էտ հունցըն սիպտըկցնում, մին ըրտ էլ ասէ տեսնանք:

ԿԷՍՓԻ:— Քէաս ախպեր, մին արմացք զատ ա: Հէնա շըհըա-

րան պատառ հէոու մին օրիշ շըհըար կա, հալալ մին շըհըար ըլիլ: Ամէն տան կըտրէ էլ ըրկաթէ հիւրթեր, վեր պատառ մուտանըմըս ըստէղան-ընդէղան ծօխը մուրխած տիւս ա տեսնմ. էլ մարթ, էլ շօն, էլ հաւ... հինչ ասիմ է, լօխ սվացած հանցն լըհա ըրաբու ճըտեր ըինին. Վէր տանը շէմքաւը նից ըս մըննում, հէնա ջըարգին տանը ըրկընթիւնաւը մէծ-մէծ քըրխանա զըզըննէ շարած տակն էլ կրակ վառած. էտ զըզըններէն մաչը սէվ նօթաւ լըցնումն իփ տամ. հէնա զըզըններէն կըրխներան ծակած տուրքնէ անց կցըրած. շալքը էտ տուրքընէն նիցեր անց ա կեւում, մինէլ ըս տեսնում, էն զօլաւը քեահըրըբարու մնան սիպտակ նօթը վեր ա տեսնում ըմններէն մաչը:

ՔԷՍՍԻ:— Փնոք քեզ, Աստուծ: Պա էտ սրսընէն հունց ըն սերտ անում նօթը իփ ածում. տղա պա ալըշմիշ չըինում:

ԿԷՍՓԻ:— Հունց թա ալըշմիշ չըինում. վեր բէագվախտ զըզընը տրաքում ա իցցուն մարթ սարանց ա քցըմ: Էս ծմըռնէս մին մալականու զալօղ կրակ ար ընգալ: Հինչ ասիմ, Քէաս ախպեր, ալալը երգինքն ար հըսալ: Ամմա ըզօրմի ընդրա հօրը, խիլա մթըրեցէնք, օրը ցօրտ, առուէ քեցալի քշտէն վէննը կացալ-էնչանք թքացէ, վեր առուէ մթըրեցէ:

ՕՂԱՆՁԱՆ:— Տէարն էլ մթթեարած կըրինի, Վէափ ախպեր:

ԿԷՍՓԻ:— Պա հինչ. մին քանէ ծեռք էլ փօխ ար օղըմ, վեր մագերը քանդի:

ՔԷՍՍԻ:— Պա հունց իր գիդացալ. տղա պա Աստուծ էտչանք ստընօթիւնը, փլշօթիւնը երկօն է. հըալա էտ ընդրանց խրէդ ա, լեաւ ա, վեր լօխ բըրդան կըտօրվում չըն:

ԿԷՍՓԻ:— Հըալա տու էտ ըս ասըմ, Քէաս ախպեր. հանց զատեր ըմ տեսալ — հանց զատեր, վեր հինչ ասիմ, վըր-ծեռքս առուէ տափան կտրալ ա: Վէր ծոլէն եշմըս հանցա լըհա մին մեծ ծմակ ըինի. իլլեաքի, վեր քշերնըս եշըմ, Քէաս ախպեր, հանցա գիւտըմըս հինչ ըինի, էն վեր քշերը մին շէնա մուտանումըս, ծըռերէն մաչաւը տներէն նթուջըրքնէն բըռումա է, առուէ հանց ա էն ըինի:

ԽԸՉԱՍՏՐ:— Տղա հինչըս սրսըղ-սարսաղ, տական-կըլխան տիւս տամ. ջրին մաչին ծըմակը, շէնը հինչ զըալաթ ա անըմ:

ՄԸՐՏԻՐՈՍ:—Տղա տու հրալա էա ըս ասում, էա պլըրընդին հրալա նթուջըքներու անըմ էլ տըվաւ, մինն ասէ, ջրին մաչին ջըրըք կըլինի:

ՔԷԱՍԻ:—Խօխէք, ասել մէք, էա ջուռայ վէր էա ա նաղըլ անըմ, մին վախտ էլ ըբրզինքին իրեսէն ըն տներ շինլեական:

ԿԷԱՓԻ:—Շատ անհօստեալեա զատեր ըք, խօխէք: Տնըշիննէ, թուղեց էք մին խօսք ըս տեղ տամ, ետնան կօտրած քըթեօլու մնան մաչ ընգէք:

ՄԸՐՏԻՐՈՍ:—Տղա տես հունց ա բոբուալի խօսըմ է: Հինչ ա թա քեցալ ա Բէաքի եկալ, զիւղըմ ա թա՛ էլ ըղրա նհէա խօսել չըլինիլ: Խէ, քեզ հինչ ընք ասըմ, սօտ ընք ասում, թա ծովէն երբա, հուվա գիւղըմ, մին լիււլըս տեսալ, օղա ըս շինըմ: էլ հեօստեալեան ըստեղ հունց անէ. ախըր մունք էլ տերման չընք օտում, հացընք օտըմ, զիւղըմ ա թա, վէր մունք տեսալ չընք, հինչու ասէ կը հվատանք: Բիտի քիւհէրը հիւրիւ քշտէ վէր ասիս, կըսազի, ամնա Մըրտիրոսէն քըշտէն սազիլ չի:

ԿԷԱՓԻ:—Տեղնս, ախըր ես խեըմ քըզ նման հըջըններէն հըետէ նաղըր անըմ, վէր հալան չի կենաս:

ՄԸՐՏԻՐՈՍ:—Ատա հէյվան էլ ըս, հըջվանու տղայ էլ: Քէաս ախօրը կըլեն մատաղ ըինիս, հինչ անիմ, զէ մին օրիշ տեղ բըրիդիր կըրքնէտ փօրըտ ընի, տու էլ թըմաշա ընիր:

ՔԷԱՍԻ:—Աջաբ մարտիմազար մաթըս Մըրտիրոս, տղա հեօվստեալեատ Ասաուծա կըտրան, խէչըս թօղըմ ուրընէս մին օրախ անց կցնինք: Տու զիւղըմըս թա սօտ ասելը հիշտ զատան, պա բիտի սղըցրած սօտ կըլինի. մարթը հէաս մին տարէ եա Բեաքի. ըիսկի կեօխըդ տիւս ա կեամ թա Բէաքին ըշտեղ ան, իցցուն հըգէր վերստ կա է ստեղան չըքենը Բէաքի: Համել Կէափին սօտ ասող մարթ չի. ես զըաստի կըճընանչիմ, լըհա վէր պերանը պէնա, կըգիդամ էն սըհաթը՝ սօտա, թա ըղօրթ: Ես ըլինիմ էն սուրփ Սրիբէզը, վէր ըղօրթա ասըմ: Կէափի, տու քու պէնէդ կաց. հու վէր օղըմա թող հվատա, հու վէր օջըմ չի, կըօխը պատալը կէա. ըիսկի ինջինմիշ մըլինիլ, լըհա զօրթըս ասըմ, վէր հէյվան զատա:

ՕՀԱՆՁԱՆ:—Դէ լեան, նազ ընելու տեղ չի, ասէ տեսնանք:

ԹԻԻՆԻ:—Ա զէ՛ սրտընէս ջաքից է՛...

ՔԷԱՍԻ:—Հը՛, հը՛, խըխօցը ըլինջինմիշ մ՛աննլ, սկսէ՛ բաշըվա դեօնըմ:

ԿԷԱՓԻ:—Վալլա հանց խունըջփօթ ըրէն, վէր ըիսկի գիտացէ հուչ, թա խօսքս ըշտեղ մնաց:

ՔԷԱՍԻ:—Ես վաչա լեա մէտըտ քցիմ. զիւղըմս ըշտեղ մնացեր.... հա, էն վէր ծովէն ըրեսէն մին շէն կա:

ԿԷԱՓԻ:—Հն՛, ըղօրմի քու հօր, Քէաս-ախալէր: Հէնա, վէր առէ ծովէն զրազան մուտանմըս, վէր ասիմ չրու հէնգ հըարիւր ախտակէ զեռ-զեռ աշտընէ կա, կըհվատանա: էա աշտըններէն մաչին, մեր Մղըթօվէն ըմըրաթէն մըչանք, հէնա ըմըրըթնէ շինած: Ամէն մինը մըրաթու կըտրէ էլ ըրկըն-երկան, զիւղումըս հունց էրկան, հալալ մին վերստ պըրիւթիւնաւ փաղէր տընգօտած, քընդիրներաւ էլ պէնդ կպօտած:

ՄԸՐՏԻՐՈՍ:—Դէ, ասըմ ըք Մըրտիրոսը անհօստեալեա մարթա, աղա, պա, ջրին ըրեսէն ըմարաթ կը կաղնէ: Բիսկի մին պուջուր քարըս քցըմ ջրին իրեսը տականըմ, պա ըմարաթը հունց կը կաղնէ ջրին եըրա:

ՔԷԱՍԻ:—Տղա պա սել նօթ սպտըկցընողը ջրին ըրեսէն կարել չի ըմարաթ կըղնըցնէ: Հա, ետնան....

ԿԷԱՓԻ:—Ետնան մին սիւրիւ մարթ մաչին նստումըն, թօրնը վէր օղըմըն քնըմըն ըլիլ:

ԽՁՏՈՐ:—Մըգեամ ջրին իրեսէն ման էլ ա կըան, քըմատաղ պա էա հունց ըն ման ածըմ:

ԿԷԱՓԻ:—Վալլա զիւղըմ չըմ էտ զեռ տըշտակէն տակէն հինչ թափուր ճանափար կա իւրան տեսնալ չիընըմ, չիւնքի ջրին տակէն ա, ամնա վէր ծկըլթօցը երա ըլինըմ, տափը տիւրիւր ա կամ: Լըհա վէր իրէք հեա ծկըլթամ ա, տեսնըմըս երկըն-եափաշ տիւրիւր ա կըամ, վէր պիծի թքանըմ չի: հանց զըթժրտակըմա, հանց—զըթժրտակըմ, վէր վէ: տաշտակնըս տեսնըմ, վէ: էլ ըմարաթը:

ՔԷԱՍԻ:—Տղա պա էա մարթիքը հունցըն սերտ անըմ էտ ճըրվարէն մաչկէն նստըմ:

ԿԷԱՓԻ:—Ախր սլըրցրած ա ըլինըմ, էն վէր հըալա խամ ա ըլինըմ շատ մարթ սերտ շանըմ, վէր պատառ սըվէրըմ ա էն ախըր ծեր Կիւքիւն նման խօխէքնէն նստըմ:

ԱՂԱՔԵՒ:—Ծեր արևն ըմ ասըմ խօսեք, իմ արևը, վեր էս տանալըս մին վէսկէ տան ինձ, մուտանալ չըմ ըխօի գատան:

ՔԷԱՍԻ:—Տղա պա էտ հնւ վա սրսաղվալ մուտանա: Քըմատաղ, Կէսփի, էտ մարթիքը հունց ջուռա մարթիքըն:

ԿԷԱՍԻ:—Հունց ասիմ, վեր կլխու ընգնիս, Քէաս արսպեր: Ըխսկի մարթու թահր չօնին. շիւրընէն կարճ-կարճ, նեղ-նեղ, չու-խընէրէն փեշկերքն էլ կտորած, մինակ շվըրներէն տակերը քնանք լէն ա, վեր քնընէն ըրեում չի, փրփաղու տեղ էլ զըզըննէրն տըինըմ կլխընէրէն: Ելնա մարթկանցը մին եօն օնին. կընանոցը վեր տեսնաս, հինչ ասիմ, վըննը-ճեռքա տափան կը կտրէ, համէլ համօթը գատը ըաղըմթչի. թա կնէկ, թա մարթ լօխ մինա, կունը -կօնը քցած, օրը չըռիւկիւ քըռքալաւ մանըն կեամ: Հա, մեր Դեր Ըվընէսին տղա, Քէասպըարը-մտընէտ ա:

ՔԷԱՍԻ:—Հա, ըղօրթ էն Բէաքի ա. էն հու հէսա իցցուն տարէ ա Ռուսէթ. մին օր դէրին անա հրցրէ, խեղճը խրէգ մնաց, թա լեաց ըինի. ասըմա քնանք կըրիւումըմ, թա, լընա մին եք տեսնամ ետնան, էլնա թօրնը օղըմըս քըինի, Դերը քըզ նըհեո—կըամչի:

ԿԷԱՍԻ:—Դէրին աշկը լիւս, վեր ըինդի տղա օնէ: Մին օր մեր Ռստամ պելին նըհէտ ծովէն զրաղաւը քըմմիք, մըինէլ տես-նամ մին մարթ, իւրան կուտըրտելաւ, պապրոսն էլ ըռըրիսէն տը-րած, շեօրեն էլ առէ ըինդի, հունց վեր ըսեցէ, զըբի մէզ կեամ ա. լընա վեր թահրը-թիւհրին երշեցէ, զըատօի գիղացէ, վեր մեր շընացէ եա: Չքէնը իմ հրցնելս, Ռստամ պելին ետ տե-ռաւ, թա՝ ւպելի գիղաս էդ հու ա. մեր շընացէ Դեր Ըվընէսին տղա Քէասպըարն ա: Քէաս-արսպեր, վեր էս ասից վէչ, լափ վընճեռքըս տափան կըտրից: Լնա վեր պատառ մուտացաւ ծէն տվէ, Քէաս-պըար! պարով, պարով, տղա էտ հինչս տեռալ, մըգեամ վեր հը-ռանան կը մըռանան էլ: Մընէլ տեսնամ ետ տեռաւ, թա Վա-րուն դուք հնւվըք, վեր գեղալըք: Կասիմ քըմատաղ, ես գեղ չըմ, ճեր շընացէ Կէսփին ըմ: Մնէլ տեսնամ ճըճըղելաւ ետտեռաւ, թա՝ Վեօղ չըմ ասում, պարեկամ, ասումըմ՝ վեր տըղացէ ըք, հըս-կացէք: Բա քու տօնը շինվի, դէ ասէ վեր շէնայըս ըլի, պա տու-գիւղըմ, չըս վեր Կէսփին Փընըգերէն գիւղըմ չի, դէ ըսեցէ ըլի, ճեր շէնան ըմ. ետնան, պատառ մետը ըրաւ, թա՝ Վա, դա, մհէնգ

Շնընէցէ, պայց էս սընաթ շառ կարել չըմ խօսել, չիւնքի պէն օնիմ, քսեօրէն Առուստամին նհէտ համեցէք մեր տօն էլ մին քանէ խօսք էլ ասից, վալլա կլխու չընգէ. վերչը, մինէլ տեսնամ, կըլխէն տըրած զըզանէն եօնգնան փունից կըրեօխ տվաւ, հու հըռացաւ: Մնացէ լընա հետան եշըմ. ետնան, Ռստամ պելին ետ տեռաւ, թա՝ Կէսփի, էտ խէ ըխօի ըրմացած եշըմըս, խէ մարթ չըս տեսալ, ըս-տեղ ըխօի ըամեալ չի կեալ, քեղ պտտառ քըլըքվարի պահէ. կա-սիմտղա պա հունց չի գըմանամ. մէկալ օրվաց տըրնընէն վըննէրէն, չուխէն թեքը ջըած կախ ընգած, մթուկէն փափաղը կլխէն քիլլին զօն էլ ծակ—լախուտը, եկալ ա ըստեղ օյին-բաղու շեօրէր կեցալ, խուսըցնելուց էլ պըրն—պարուն ա անըմ, պա էլ Կէսփին հունց չի գըմանա: Վերչը, հինչ կխընէտ ցըըցնիմ, վեր քըսօր տեռաւ, ես ու Ռստամ-պելին երկացնէք ըվըլ—եալալ զըբի Քէաս-պըարէն տօնը քեցէնք: Քէաս արսպեր, վեր տեսնաս կը գըրմանաս. հանցա մին թըքրվերու ըմարաթ ըինի: Վեր շեմքան մուտացէնք, Ռըստամ պելին, տանան կախ ըլած մին կօպալ կար, ընդիւր անա ճիք տաւ. կասիմ տղա էտ հինչ ա, օղըմըս պուք տնս. Ռստամ պելին ետ տեռաւ, թա՝ հէսա էս կուպալէն էն մին ջօնդան մէավ-թիւլ անցկըցրած չքէնը առէ տանը մաչը, մըվթիւլին էն մին-ջօնդն, էլ հնա, մին գընգուլակու թօփա կապած, վեր էս կուպա-լան ճիքըս տամ, ընդեղ զընգօլալը զընգ-զընգամա, ետնան, կեամն դօնը պէնըմ: Կասիմ տղա դէ էլ գնգուլալը հինչ ա անըմ, խէ դօնը թակել չինի... չըռ խօսքըս տեղ տալը, մինէլ տեսնանք, դեօնը ճաճաց, մին ըրկըն-երկան մարթ, ըռաչքաւը մին սիպուակ սուփրայ քաշած, առէ հանց ար պըտանած մեռալ ըինի, գեօ-նը պեց ըրաւ: Ռստամ-պելին սըվթա մուաւ, երս էլ, տէս ու տէն խըրշուտելաւ հետան քնըմըմ: Հըցեաթավը վըբը անցկացէնք, տես-նամ մին պեցուր մըղվան. էնանք պեցիւր ար, վեր առէ հիւքիս տիւս եկը չըռ պըցրանալը: Վեր առնէրէն, ընկուշկներէն եշիս, կմըթիւթարիս, — լօխ փըսարատէ ար տամ: Վերչը Ռըստամ-պելին, մին տանու վեսկէ կօթա փունից քոէ տըվաւ, մինէլ տեսնամ Քէասպըարը տիւս եկը մին երկան Դերու փարաջու մնան գատել կեցէն, հմեցէք ըրաւ, մտնէք մաչը:

ՔԷԱՍԻ: Հայլի հա, ժմանակ. մին վախտ Տօթըլանանց հեռէ

կօծը մին կպեկան ջիւր ար կրում, մհէնդ տուներէն ըողէքնէլ ա վեակէ: Փնաք քեզ, Աստուծ:

ԿԵՍՓԻ:—Հա, տարաւ մեզ մին օթադ: Հինչ ասիմ, Քէաս ակ- պեր, գըբըր ըշտեզ վեր եշըմ չըս, հանցա լարգոտած ընինի, մին- շի տափնէլ-ռէանգ տըված փըստորատէ ար տամ: վեր սըվթա մտէ վիեցէ, թա վէննս սըլկէ: Պատերը լօս զեաուա նախշած, ամէն մի քիւնջում սըըն-սերիւն ըստուընէ վեր տըրած, ըրըմնէն էլ էն հանգէ գըբըրթիւնէ թլաւ նախշած սուփրէք քաշած, վեր հինչ ասիմ, ամէն մինը հալալ իցցուն թըման ըածի: Էս թըրափէ պա- տէն տակաւը մին սերուն տախտ կապած, իրեն էլ էն ջուուա փա- փուկ շինած, վեր նատուըս քշանըմ ա, վեր երըս—կենում էլհա- ինքը ինքը պըցրանըմ ա, տախտէն ըուաչկէն էլ մին բիւլիւր ըստօլ վեր տըրած ըրիսաւը էլհա մին թընգակին սուփրա քաշած: էն մին թըրափէ պատէն տախտէն էլ մին զեռ ըստօլ վեր տըրած: վէննէրը հաստ-հաստ տակերն էլ շիւշի: Ամէն մին պատայ էն ջուուայ վէսկէ նթուըրքնէ կցըրած, վըէր եշիս միթէարիս:

ՔԵՍՓԻ:—Փնաք քեզ, Աստուծ:

ԿԵՍՓԻ:—էն ջուուայ պըտրեքնէ, էնջուուայ...էլ հինչ ասիմ, քու աչկաւ տենալ բըրիդիս, վեր հվատաս: վեր լօս կընդ—կընդ ասիմ, մին տարէ կը քաշի: Էնքան տէս ու տէն խըշխօտալ ըմ, վեր վէ- գըս մինչի մհէնդ էլ ցաւում ա: Էտ վէարիւմը, Քէասպարը ետ տե- ուա թա՝ «Աէափի, ինչի չըս խօսում, նաղլ ըրա մին տենամ մեր զեօղըմը հինչ կայ»: Ասիմ, քը մատադ:—էս տօնս մըննօղէն մըջալ կընի խօսէ, էսչունք գըրթարած տօն կըինի, մըկեամ վէսկու մեա- դան օնիս, էտ պա եանղուզ, կասիմ, մունք էլ չընք քըթէնում էտ մե- ազըանը: Հէսա հալալ էրիու-իքէք ամէս ա, կասիմ, եկալ ըմ, սոռէ սրտըմնայ ըմ ըիլալ, ըիստի շըհարումն էլ ապրել կըինի, վեր գիտա- ցած ըինի թօբբա թա վէնըս-վէննէս ըուաչկէն տըինի: Էն եօփի դաղլմիշ Զէաքիւն տղա Հրաբեղը, կասիմ, ընցած տրնէն եկալ ար շէ- նը, հանց քիւհէր փշից, հանց քիւհէր, վեր հինչ ասիմ, ուզեցէ թա թե անիմ թոչիմ: աչ լեաւ շըհարա, ըշտեղաւ անցըս կենըմ վէսկէ արծաթ ա, մարթիքը սըըն-սերիւն, քղըքփարի: Երսէլ ըտրա թըրահըր թիւհըրին եշիմ, տենամ, ըրծաթէ քեամեարը մաչկէն, կըր- բարին կիսէն, մահուգ չուխան կեցէն—հըրաօղէ: ամմա, կասիմ, հէ-

սա էսչունք վախտ ա ըստեղ ըմ, էլ տեղ չըմ թօղալ ման ըմ եկալ: անց- կացած շըպթին էլ Ռըստամ պերուն նհետ քեցալի, էն զվուանէ ըն ասըմ, հինչըն ասըմ, ընդեդ, թա-մին կօրծ քթենամ: ըստիւր-ընտիւր ըղաչանք ընելան, մըննաթ ընելան, հիւքիս տիւս եկը: վերչը, մին փօրը հաստ խօզէին կար, էն ետ տեուա, թա իմ գըվօղումս տեղ կը- տամ, եկ պէն ըրա: 10 մնէթաւ մտէ ըտրա զավօղը: երկու օր կա- ցէ, հինչ ասիմ, խրէդ մնաց, թա էն դիւնեա քըինիմ: Զանրս քը մատաղ, վէչ հալալ հաց օտել ա ըինըմ, վէչ հալալ ջիւր խմել: ա- մէսը վէչ-թա 10 մանէթ, հգէր էլ տան, թօբբա թա քըինիմ:

Քրասպըարը տենամ քըմքըծեծաղ տալալ ետ տեուա, թա՝ «Աէափի, մինչի վեր չըշարվիս վէչ, նթու-թախ չըինիս, կը կարիս հաց ջարիս: տենմըս ինձ: պա վեր ետ էսչունք չըշարված չըի- նի, քսան տարէ ըստեղ-ընդեղ կըրթեցած չըինի, վերչը եկած ըս- տեղ նթու-թաթախ ըլած, հնւ ինձ մին կուպէկ կըտարս:

Ասիմ, բալամ պէնը կըրթիլըմը շի: վեր կըրթիլըմը ընար, հէ- նա իմ դայ-օղլիս էլ ա կըրթեցած: հվատայ քըղանս հէնգ թաբաղա էլ իվիլ ընի կըրթեցած, մին սհաթումը հէնգ պըրուվաթօղթ կը կիբի ընդեղ դըինի: ամմա հինչ, չիւլը չօթուած, իմ օրըմըս շէնըմը ման ա կեամ: Էտ քու նասիբըտ ա ըիլալ, կասիմ, վեր բիրդանը-բիր բախտըտ պերալ ա: Աէր ետ հգէր տարէ չըշարվիմ, թօբբա թա կա- ըրիմ մին զատ շինիմ: Տենամ ելըհա ծըծըղելաւ ետ տեուա, թա «Աէ- ափի, տու զեռ գիւղըմ չըս կարթիլը վէրն ա: կարթիլ էլ կա, կար- թիլ էլ:»

Ասիմ, տղա, եանի Ռերու անա էլ շատ ըս կըրթեցալ: էտ վեր կըրթելաւ մարթ հրուստանա, մըհէ մեր Ռերերնան, Արթըբեղերը թը- քավէրին տեուալ: տու, թա քսան տարէրս կարթալ, հանց Ռէր կա իցցուն տարէ կարթում ա, էլըհա լըփչունէն կեցէն, հեռէ կարքեան, շարվար էլ չինըմ, թա կենա: պա էտ հունց անինք կ'ասիմ:

ԱՂԱՅԵԿ:—Բաշըվա զեօնըմ, ա Աեափ, քամակը լեաւըս պերալ:

ԿԵՍՓԻ:—Հա, էս վեր ըսեցէ, էլ խօսկ շի քթաւ, թա ասէ, սկից ծըծաղելը: էտ վարումը, մին մատուշկա նի մտաւ, ոռուսե- ըն մին քանէ խօսկ ասից Քրասպըարին, Քրասպըարը երկացաւ, ինձ ու Ռըստամ պերուն տարաւ մին ջօկ օթադ: էտ ութաղէն մաչ տեղըմը մին մեծ ըստօլ ար վեր տըրած, ըրիսաւը մի սխպտակ սուփրա քա-

շած, չըսը-պիւլիւր էլ խըրդը-խուրդա ըստուինէ վեր տըրած, նըստե-
լու հետէ: Հացը, կընանչին, պաները, աղը, տաքտեղը, ծիւկնը, ջա-
նըս քեզ ասէ, ըրաղէն շիւշան, կինուեն բութըկեքը, ըմնէն, ըիրեք-
չորսը մին-մինու իըրայ տըրած, չըսը-պիւլիւր շարած, ամմէն մինին
երայ էլ սիպտըկ-սիպտակ եըղլուսնէ, ետնան, ըրծաթէ տընըկնէ, քը-
թիւլնէ, էլ հինչ ասիմ է, ստուէն իրեսը վեր հվըքիր, մին սերուեն
դիւքան կը տեռնար: Էտ վեարումը Քըսպըարին կնէզը նի մուաւ: Քու
արեն ըմասըմ, իմարեը, Քէաս ախպեր, վեր տեսէ հուչ, ես իւրան տեղ
հմընչեցէ, տղա էտ հայեասըզնէն խրէզա մնացալ, թա առուէ տըկ-
լոր ման կեան. կլեօխը պեց, դեօշը պեց, կուռները չըու ըրմուենգ-
նէն պեց. վեր մուտացաւ թա ծեռք տա, ես շիւտ կլեօխս քաշ-
քեցէ:

ԱՂԱԲԷԳ:—Տղա էտ հըալումը հըալա մարթու մաչ էլ ըն տիւս
կեամ:

ԿԷԱՓԻ:—Մարթու մաչ տիւս կէալս վերն'ա, խօսել ըս վեր-
նան, խաղ ասելս վերնան, քոքոալս վերնա...էլ հինչ ասիմ է, լը-
հա վեր նասեցենք թա հաց օտինք, էտ հայեասըզը էլ մըճալ չի
տվաւ, թա մուենք էլ միտէ խօսինք. ընել հանց խօսըմա, վեր վըր-
թաբէդ էլ ըրինի, կլխու չի ընգնել. ուղեցէ թա մին ծեռքաւս տամ,
տեղը չըար:

ՔԷԱՍԻ:—Էտ քու հըրինարըտ չի, ըրտի տեղը Քէասին բըրդի,
վեր հանց նախշի, հանց օլին տըրինի, վեր մօկնէն պիւնին հգեր
մանէթ տան:

ԿԷԱՓԻ:—Վերչը խրուգնէն պերէն. մինը—մինին հետան, էլ կրե-
ցէ վէչ, թա հմբարիմ քանէ ջուռաց ար. ամմա, քու արեն ըմ ասըմ
Քէաս ախպեր, հինչու վեր օտըմի, տըրբի մաշկըս ար քըրինըմ: Երնէլ
գիւղըմըս հուենցն օտըմ, վեր ասիս, ծեռքաւ մին զատ չըն եր օնըմ.
հէնա, ըիրըք-չորս ճղնանէ բիղեր կա, ընդրանց պոսկընըս քաղըմ, ետ-
նան, պիւրընեըմը տըրինըմ. երս էլ երկալի, թա փօրցիմ, չըու պերանս
տանը, մսէն ճօթը վեր ընդաւ, ըստուէն տակէն էլ, տու մէ ասել, մին
պիծի շօն ա ըրինըմ, լըհա կուացէ, թա եր օնիմ, տեսնամ ըշտեղ...շօնը
չանթից, հու պիւք...մնացէ լըհա հէտան եշըմ: Վերչը, հինչ կլեօր-
նէտ ցվըցնիմ, մին թահրաւ, վեր պրծենք, երկացենք էլըհա եկենք
էն ըուչի օթաղը, էտ վարըմը Քէասպարին կնէզն էլ եկաւ. էն վեր

սըվթա ըսեցէ մին մեծ ըստու կար, վէնները շիւշի, մտընէտան, ըն-
դիւր ըուաչքէն նտից, մըրինել տեսնամ քէամրանչիւ ձէն ա կեամ,
տէս ու տէն խըշկուտացէ, ետնան, Քսպըարին կասիմ, քմասաղ, էտ
շտեղըն ածըմ: Մըրինէլ տեսնամ քոքոոցը ընդաւ, էս ու էն սկսեցէն
ճծաղէլ, ճարս կորից, երս էլ ճծղեցէ. ետնան, Քըսասպարը տա-
րու ինձ էտ ըստուէն կօշտը, ըրեսէն ղափաղ օնար, ըզէն պցըրաւ,
թա՝ Վէպիի, դէ եշի տես հինչեր կա՝ Եշիմ տեսնամ հինչ. մաչին
հատա իցցուեն միթիւլնէ անցկցրած, ամէն մին միթիւլին տա-
կաջնէլ խրդը-խուրդա չքիւջնէ: Տիւսի թրափէն էլ, էս երկու ման-
նէս լենքասը, ջըարգին սըղափէ կօթէր շինած, մինը սե, մինը
սիպտակ, վեր մանըտ էտ կութերէն մինին նիքս տամ, մինելըս տես-
նըմ, չքիւջնէրէն մինը միթիւլին ճէփոււ ա հու ճէն տամ: Վէր
լափ կլխան սկսըս մին-մին էտ կութերէն մաննաւտ ճխարմ, լափ
ճեծաղա. մինը դըռուամա, մինը գըռուամա, մինը ճկլթամա, մինը
շվկամա...

ՔԷԱՍԻ:—Փանք քու զօրու թիւնիտ:

ԿԷԱՓԻ:—Էտ վեր ըրտի ըրմացած եշըմի, մըրինէլ տեսնամ, մին
տղա մուաւ, Քսպէարին մին կեարմիւր թղթու սլատառ տուաւ, Քէ-
ասպէարն էլ հանից, վալլա զիտացէ վէչ վերչանք ար, լըհա մին,
կեարմիւր տըսսանուց աչկաւս ընգաւ, տուաւ էտ տղէն, էտ տղան
կլեօխ տուաւ, հու սիւս եկը. ետնան, Քէասպէարը ետ տեռաւ՝ թա՝
Վէպիի, էս քշեր թատրուն կայ, օզըմըս եկ քզէլ տանիմ, թմաշա
կանիս. Վասիմ թատրունը վէրնա. թա օղէ հէսա կ'քինինք կը-
տեսնաս, կասիմ, դէ լեաւ: Վէր պատառ մթըրթօրից, Քէասպէար-
նան իւրան հարսը, շիւրընէն՝ փուխեցէն, կուր-կուրը քցած, տիւս ե-
կեն. ես նան Ռստամ պելին էլ հտըներան. լըհա վեր քիւշին մը-
ղակը հսենք, տեսնամ մին փայտօն ջօխտ սե ճի լծած, հազր կանգ-
նածա. նտեցենք մաչին, հու եալլա. լըհա մին ըշկըճպոււմ, փայտօնը
կանգնից մին մեծ տան ըուաչքէ. կասիմ, տղա էս հինչ շիւտ հսենք:
Ետնան, վեր եկենք, Քըսասպէարնան իւրան հարսը, էլըհա մին-մըրինու-
անա կացած, նի մտէն. մուենք էլ հտըներան մըրտըվանաւը պըց-
րացենք. չըու տըրիւր հանելը, հիւքիս տիւս եկը, ընէլ հանց մըրդվան
ա, վեր խամ մարթ ըրինի կըկորչի՝ ճուրճօ, ես դըբի տէս ա քըրինըմ,
եա դըբի դէն, վերչը, մին թահրաւ, վեր հսենք: Քէասպէարը մին

շեմքաւ նի մտաւ, մուկնք էլ հետան: Քէաս ախպեր, վեր եշեցէ դը-
բի քաշ, ջանս տղտեղաց: Մին պեցիր տօնա, քաշ ղօլէն, տանը լենք-
սալը ջըարգ-ջըարգ ըստուլ նէ շարած, ետնան, խիլա պեցիր, չըսը
պիւլիւր, տխտակէ բալկօն ա շինած մչերքամէլ տխտակաւ կտօ-
րած պիծի-պիծի ըթուղներու մնան: Մուկնք էտ ութուղներէն մինը-
մնինք, մզանա պեցիր էլնա չըսըպիւլիւր մին ջօկ բալկօնա շինած.
վեր դվեր ի եշըմ, մարթ ար ըրեռւմ, տըրեր ի եշըմ, էլնա մարթ.
էլ հինչ ասիմ է, թօրնը վեր եշըմի, մարթար—հու մարթ: Էնքան էլ
պեցուր ար տեղս, վեր դըրբի քաշ եշըմչի, մարթիքը հանցին—էն
վեր մըշեմին պիւնը կըքանդիս տիւս կը տեռնան ըստեղան-ընդե-
ղան է, առեէ ըինդի սրվէչին տամ: Տանը քըրիլի ղօլէն էլ էս ութաղէս
մըշանք մին մեծ տախտա կապած, ըռաչքամէ էլ, եղծէն սղանէն վը-
րաքուրը կա վէշ, հեռէ ընդրանա, մին ընդի վրաքուր քաշած: Տէս
ու տէն եշըմ, վախտը մինէլ տեանամ, Քէաս-ախպեր, զըռգոցը-թը-
ըմիթըմիթը ընգաւ, բըրիզան եր թուէ: Եշիմ տեանամ, տախտէն
ըռաչկէն մին սիւրիւ ոռւմնէ նստօտած ըռչքներէն էլ, եխծուէ կիր-
քըկնէն տեսալս, հեռէ ընդրանց անա, ըինդի կիրքըկնէ վեր
տրած, մին քանէ խզմըզօրած թուխթեր էլ երըներան, էտ ոռու-
սէրէն էլ, վէրէն ծեռքէն քըմընչա, վէրէն ծեռքէն մին թալիւր
կորմեռ վէսկու նման փլըստօրատէ տամ, զըռուէք, վէրէն ծեռքէն
տմբլա...էլ հինչ ասիմ է, ջօռու-ջուռու զատեր՝ մինը զըռուամա. մի-
նը պըզզամա, միննէլ տէփը ծեռքէն, վեր ծեռքերը նղանըմա սուս
ըրած նստումա, լնա վեր պատառ դընջանըմա, երա կենըմ դըմիթը-
նըմ, հու էլնա տեղը նստըմ: Էնչանք զըզըռացէն, վեր ընգըմ-
նէն քըռացաւ: Լնա վեր պըծէն, մըրինէլ տեսնամ լօխ բըրիզան
ծափ տէն, մնացէ լնա խըրչիտըմ: Ետնան, Քէասպէարին հըցրէ,
թա՛ լեան ածալ ընդրա հէտէ ըն ծափ տամ: Մտկում ըսեցէ՝
հանդի հա, անգըռու կանչի դալալ—Պօղոս, պա վեր տու ըստեղ ըի-
նիթ, էն չախը լնա երկը կընին պպըլ-պապալ ըինին: Աերչը մինէլ
տեսնամ, վրաքուրը երվըշ-եալաշ պըցրացաւ, վեր առեէ պըցրա-
ցաւ, մին սերուէն ծմակ ըրեաց, իւրան ծոերաւը, սրերաւը, մին-
չի երգինքը, լիւսնընգեան...այեր, եշըմըմ, տանը կտրէն ծակ չօնէ,
մին պէն չօնէ, էս ըշտըղմ բըզի ըրեաւ: Աերջը, էլնա Քըասպէարը
ասից, վեր էն օլին-բազնէն իւրանքն ուէանգ-ուէանգ թուղթերա շինալ:

ՄՐՏԻՐՈՍ:—Տղա պա էնչանք քուռացալիր, վեր կրեցեր հուչ
թօղթը եըրկինքան, ծոերան, սրերան, ջօկին:

ԿԵԱՓԻ:—Վեր հէսգ ջօխտ աչք էլ փօխ օնիս, թօրբա թա
կարիս ջօկել: Տղա հուկնց ասիմ. քու աչկաւ տեսնալ բըրիլիս, վեր
ասիս, հա, ըշխարքումս էս ջուռա մարթիք էլ կան:

ԲԵԱՍԻ:—Էտ մարթիք չըն, Կէափի, էտ ստընէքըն, ըշկըկապե-
ըն, մարթը ըիտի զատը հուկնց կանէ: Էտ քեզ խափեալն տարալ,
լեաւս պրծալ: Մէկալ տընէն էս մօտ շէնըմս ըիտի մին զատա պը-
տահալ, ասիմ անձուկ տիր:

ՕՉԱՆՋԱՆ:—Քէաս-ախպեր, հւատա Դերին նաղընա:

ԲԵԱՍԻ:—Հա, էնա: Մին քշեր հրէշտրազը կեամ ա Դերին տօ-
նը, Դերն էլ քօնըլած ա ըլինըմ: Հրեշտրազը մուտանըմա Դերին
երկցնոււ. Դերը գիւրթանըմա տեսնըմ մին հրեշտրազ ըռաչկէն վէն-
նը կացած, —շատ փիթ վախըմա: Ետնան, հրեշտրազը ետա տեռնըմ,
թա՛ Դեր, վախել մէ, ինձ Աստվաճածինն ա ըղարկալ, վեր քեզ տա-
նիմ իւրան կօշտը: Դերը ասմա, պա՛ Աստվաճածինը ըշտեղա. հրեշ-
տրազը ասըմա՝ հէսա էս շէնիս կլխէ սարէն մաչի կրանըմըն ա: Դե-
րը էն սհաթը երա կենըմ. մնաւօփը, խաչը, մաշտօցը երօնըմ, հու
եալլա: Քըրինըմ, քըրին, վերչը հանըմա սարէն, կրանաւը նիա մըն-
նոււմ, տեսնըմ Մարիամ Աստվաճածինը թախտէն երա նստած, Քրիս-
տոսնէլ գիւրգիւմը սրած, մին սիւրիւ հրեշտրազնէ էլ կուղքերքալը
շար ընգած: Սարէն մաչն էլ հանց լիւս ա ըլինըմ,—հանց լիւս, կապա,
թա՛ իցցուէն ըրիքնակ ըինի տիւս եկած: Դերը վեր տեսնըմա դէաս-
տի չօքըմա, ըռաչքէն ծօնդր ա տըրինըմ, ետնան, մնաւօփը տեսնըմ
ա դըբի Աստվաճածինը, թա՛ իքնկալ, էտ քու վերթին ա: Էտ Կէս-
ըմը, մինէլա տեսնըմ բըրիզէանը-բիր մթնից, վէշ Աստվաճածին, վէշ
հրեշտրազ, վէշ տէս, վէշ տէն, ինքն էլ մին սարու պտկէ չօքած:
Խեղճ Դերը, երակենըմ ըրիբսէն խըրհանըմ, սաղմօս կըթիլեաւ, մին
թէհարաւ, վեր տօն հանըմ: Ըիտի զատեր շատա պտահըմ: Ամմա, էս
թէհարը գիւղըմ. վեր ըիտի զատա պտահըմ, ըրիբսէն խըրհանէ.
Թա ստանայեա ըլինըմ, դէաստի կօրչըմա: Բէազվախտ, վեր օրիշ տե-
ղըմ ըլինըմ, Դիւքին կեամ ա, թա կանչի, ըրեսէս խըրհանըմ, խա-
չին աղօթքն էլ ասըմ, թա Դիւքին ա ըլինըմ, հէսա հու մնամա վէն-
նը կացած, թա ստանայեա ըլինըմ դէաստի կօրչըմա:



ԱՂԱԲԵԳԻ: — Քէաս-ախպեր, խօսիտ շքարաւ ընիի, մին հիշտ
թահր էլ ետըմ գիւղըմ: Վէչ աղօթք ասէ, վէչ զատ ջըբոււմը մին
պուղվատէ զատ պահէ, եա տենակ, եա չախմախ: Վէր սատկէ ստա-
նան մուտանալի պուղվատան:

ԿԷԱՓԻ: — Զէ, իմ տեսածը զօրթ ա, իմ տեսած ստընէքը, վէր
տանիս մին պուղվատու մէարէան, ըռչքներէն էլ, վէչ թա աղօթք,
օղըմըս իցցուն կլեօխ Աւետարան կարթի, էլհա էնընհու էն:

ՔԷԱՍԻ, — Զէ, Կեափի փօրցած բըրիդիր, ետնան կը տանիր, վէր
դիւզըմ ասըմ: Դէ մհէ, անց ա կացալ, էլհա լեաւս պրծալ. նաղըրդ
վըբըբըբու տեսնանք:

ԿԷԱՓԻ: — Հա, էտ ծռերէն մաշան, մըինէլ տեսնամ, մին մարթ,
մինէլ մին կնէզ տիւս եկեն, կարծ-կարծ շիւրերաւ, վըր-կլլնեն պեց.
մինմինու նհէտ խուսեցէն, վազ-վազ ըրէն, մինմիինու խըատեցէն,
պուօշտի ըրէն, պար եկէն, ծծըղեցէն, հու ա գիւղըմ է-հաղ ըսե-
ցէն, հու կօրէն: Նստուած մարթիքը էլ հա սկսեցէն ծափ տալ:
Պատու կացէն, մինէլ տիւս եկէն, մինէլ կօրէն, եկէն-քեցէն, եկէն-
քեցէն... վերը տերտակ: Վէչ էն ա երկենամ, վէչ էն ա նստիմ, կէս
քշեր ա տեռալ քօնս էլ շըռշըռամ: Վերը, հինչ կլլնէտ ցվըցնիմ,
պրծաւ... Մարթիքը երկացէն տիւս տեռէն, մոււք էլ տիւս եկենք:
Ետնան, Քէասպարը ետտեռաւ, թա՛ Եկեափի, հոննցա մեր թատրունը,
հաւան կացէր: Կասիմ, տղա ըտիւր հինչին հաւան կենամ, զոգո-
ցէն, թա էն հայեասգներէն պուօշտի ընէլին: Ըխտի զատէն, կասիմ,
փող կտան, պա մղափիւն չի էն փողը՞: Տեռ շատ զատի ըսլեական, թէ-
արսիւ նման, քօնս տանըմար. Քէասպարը էլ զատ չի ասից, ծեռք տը-
ւաւ, հարսէնը նհէտ փըլտօմըմը նստից, հու հոացաւ: Ետնան Ռստամ
պելին էլ, եկենք մեր մէանգըրը:

Ըռութանա, ես ու Ռստամ-պելին երկացենք, տիւս եկենք բա-
զար. ծովէն զրաղաւը, տներէն թմաշա ընելաւ քըրինըմ ընք. Քէաս-
ախպեր, հանց ըմբրաթեր կա, հանց ըմբրաթեր, հինչ ասիմ. Ռըս-
տամ-պելին կլեօխը դէանգի ըրալ. էս հիւր տօնա, էն հիւր տօնա.
լհա վէր հրցնըմի, թա՛ ներքէ շընացէ Ղ.....ին տօնա. ճընանըմը՛ս,
Քէաս-ախպեր, էն...

ՔԷԱՍԻ: — Տղա հոննց չըմ ճընանըմ:

ԿԷԱՓԻ: — Ռստամ-պելին կասիմ՝ պելի, քմատաղ, մին էտ մար-

թին նշանց տօք ինձ: Աղբաթը խեր, էտ վէարըմը, ծովէն քշտէն, մին
դիւքեանու ըռաչքէ նստած ար: Վէր եըշեցէ հուչ, առուէ միթըրե-
ցէ: Քէաս-ախպեր, մեր թէահրի շիւրերըմ, ըրխալուղը կեցէն, կե-
տէն կապած, քու շլլարէտ մնան մին շալվար էլ կեցէն, էրկան — բու-
խարա փափաղը կլլսէն. դինջ-սերուն իւրան տեղը նստած. վէչ
թատրունու մղակ կը ճնանչի, վէչ էլ մարունու: Օրը չոռուգիւն,
կլեօխը քաշ քցած, իւրան քսիթիւնին ա, իւրան ծեռուք, իւրան պե-
նը տեսնըմ, տներէն քրէհը նա, դիւքըններէն քրէհնա, ինքօնըմ, տա-
նը նստում, ըվ-եալաշ օտըմ: Մին խօսկաւ, Աստու օրհնած մարթն ա:

ՔԷԱՍԻ: — Հալալ ընիի ըխտի մարթին դեօվլաթը:

ԿԷԱՓԻ: — Ամմա Քէաս-ախպեր, մին այիք օնէ: Ղօրթա, օրիշ զը-
տերու նհէտ խառնվում չի, թատրուն զատ չի քըրինըմ մին էսա,
վէր ժամ էլ չի քըրինըմ, էա պատու խարաբի ա տամ: Ախնէլ, վէր ին-
սափաւ խօսիս, էլ հա մեղադրելի չի: Խեղճին, ասըն ըխակի հաց ու-
տերու էլ մշալ չօնէ. հիշտ զատ չի էաքան դիւվլաթէն երբա աչք
պահելը, մըրինըս տեսնըմ, ստանա մարթիքըն, մինը քրէհն ա կտրըմ,
մինը վախտն ա ետ քցում...

ԱՂԱԲԵԳԻ: — Ղօրթս ասում, ամմա, դէ մին-մին էլ վէր ելածուն
տունաւը նի մննէ, լեաւ կանէ:

ԿԷԱՓԻ: — Դէ մհէ, ինքնա դիւտըմ: Մինքանէ օր էլ մնացէ, վեր-
չը, Ռստամ-պելին կասիմ՝ պելի, ես ըստեղ կարել չըմ կենալ, էլ հա
փառք մեր շէնին, մին կուտուր հացա, ըշտեղ վէր ընիի կը ճարինք:
Մնցկացած Գըրիբգի ըռութանա երկացէ, շեօբերս կպեցէ հզըրվե-
ցէ, վէր զըբրեկիւ չախը, հղէ ընգնիմ: Կասիմ, դէ կա վէչ-կա, վեր-
չի օրնա, քըրինիմ ելածըմը մին քանէ հեա ծօնգըր զըրինիմ: Մտէ եխ-
ծէն, տեսնամ պըղարաքը կաղնած: Սղանէն ըռաչքէն չբօրպիւլիւր
խրղը-խիւրղա, ծեր Գիւքիւն մշանք խօխէք, կըստած ծըվլալի հանց
կարթըմըն, վէր մխթարիս: Էս մին տէասըմընան-էն մին տէասըմը
մին քանէ Դէրէր կընօտած, պեմին ըռաչքէն էլ, մին սերուն, սպուկ-
մրօք վըթապետ վէննը կացած: Լհա վէր, Հաչը-մերին մուտացէն, մին
Դէր, կվազանը պերաւ վըթբեդին սուաւ. Քէաս-ախպեր, վըթաբեդը
կվազանը ինք կպեաւ, եր ըլեաւ սեղան, քըրինից պըբըբըրէ Դէրին քըշ-
տէն կաղնից, սղանան կուացաւ պաչից, մին սնաթ քիմի կլեօխը
քաշ քցից, ետնան, պըրցըրաւ, էլհա մին սնաթ քիմի տիւր եշից, մին-

28205-62
1954. / 1958



էլ տեսնամ ետ տեռաւ, հունց ետ տեռաւ... Հըալա մին իրեսէն խը-
չըհանից. էլ հա դբի տըեր եշից, վեր ըշկերէն եշըմի, մազերս դիբ-
դիբ կաղնմար: Վերչը, մին խիլա ինքը-ինքը խօսից:....

ՔէԱՍԻ:—Էն մհէ հրեշտրագներէն նհէտ կըինի խուսեցած: Ե-
րանի ընդիւր հիւքիւն:

ԿէԱՓԻ:—Գի պա հիւր նհէտ ար խուսելու: Վերչը սկսից քա-
րոզ տալ: Հինչ ասիմ, լափ մխթըրեցէ, առռէ իմ սրտաս ար խօսըմ:
Ըստիւր երրա ար կգնվում, ընդիւր երրաեար կգնվում, թա՛ խէ եխ-
ծէն թողած, էն թատրունա, հինչ աղու ա, ընդեղ ըն վազ տամ. էտ
փուլերը խէըն փչըցնում, վերչը շատ զատ ասիցէ, էն ա, վեր շա-
տը կլխու չի ընկնվում, չիւնքի շատ ա պառաւ, խօսքերը կարըմչի պարզ
ասէ, մին փարան էլ մուացալըմ. վեր քարօզը վերջըցրաւ, էլհա դբի
տըեր եշից, լեաց ըլիւաւ, ըղաչանք ըրաւ Աստու, վեր էտ մարթօ-
ցը խեղճ կեա, կուրծանէ վէչ:

ՔէԱՍԻ:—Տղա պա, մեռնիմ ընդիւր զօրութիւնին, վեր ըտի
մարթիք չինին, Բէաքին մին սհաթ էլա վէննը կը կենան, մհէ ից-
ցուն հզեր հէտ փրսըվեր-տիւվեր ար իլէալ:

ԿէԱՓԻ:—Հա, վեր պրծեն, եկենք տօն, ես ու Ռստամ-պելին հաց կե-
րենք, շեօրերս երկալի, տիւս եկէ: Քիւշաւը անց կնայիս տեղը, Քէաս-
պարը էլհա պտահից, թա՛ Վէափի թօրնըս քընըմս Կասիմ, քմա-
տաղ, շէնըմ քըին ըմ: Ետ տեռաւ, թա՛ շէնըմը հինչ կա, քըինիլմէ,
ստեղ մնաց քըզ հետէ մին լեաւ գեօրծ կըմարիմս Կասիմ չէ, կարել-
չըմ, էսունք վախտ ա ստեղ հիւքիս տիւս ա եկալ. վէչ ըխտի դե-
օվլաթնըմ օզըմ, վէչ էլ ըխտի ապրուստը. ետնան, ետ տեռաւ, թա՛
ադէ վեր ըխտի ա, տու կարըմ չըս կենաս, ծեր խուխէն, Թիւնիւն,
ըղարկէ իմ կօշտս կրթըցնել տամ Կասիմ, քմատաղ, ես վեր կարըմ
չըմ կենամ, Թիւնին հու պուջուր խօխա ետ հունց կը կենա, համ էլ
կասիմ, թա՛ կրթիլուա քըզ նման տեռնա, հաջաթչի: Վեր էս ըսե-
ցէ, Քէասպարը ծծըղելու ետ տեռաւ, թա՛ թէ, Կէափի, ես հինչըմ
Կասիմ, ըխկի հինչ, մօրէնց ալիք շօնիս. երկացեր քու հօր, քու մօր
թուղեցեր շէնըմը, քեցեր Ռուսէթա-ըշտեղա, կրթեցեր, մին ուսու
մատուշկա էլ ինք կալիր, մհէնգ ըտտեղ, կոնը-կօնը քցած, մանըք
կեամ. քու հօր, քու մօր աշկը ջիւր ա կտրվալ, թա մին տեսնան իւր-
բանց պահած-պաշտած տղէն, ամա ըսկի քու մտկաւրտ էլ չի տնց կե-

նըմ: Թա Թիւնին էլ բըղի կրթիլեաւ ըխտի տեռնա, էն օրը Աստուծ
վէչ անէ. խէ, շէնին հինչ ա եկալ, մեր պապերը հունց վեր ապրա-
լըն, մուկ էլ ըլինդի կապրինք: Մեր շէնին մին օր ապրելը, ըստե-
ղէս հզեր տարէ ըպրելին նհէտ փոխելըմ. էն վեր հունձը տեղա
կեամըս ըխպրին երրա իրեստ լանըմ, չըղախէն երրա նստմ,
կիւմշին մաճնան փրթիւշ անըմ, բուստանէն փշփօշուտ, թեազեա
խըջըր ներան էլ մին քանէնը մաչը կտօրըմ, հու քթեօլը եր օնըմ
ջանէն ընգնըմ-էն ա լեաւ, թա քու սլընգէ բօրշտ: Լհա վեր փրթիւ-
շին անըմը տէ, Քէասպարը պուշնէն լազտօտից, ետնան, ետ տեռաւ,
թա՛ ադէ տուրս գիւտըմ, Կէափի, ես քըզհետէ ըմ ասըմ, վեր օզըմ-
չըս, Դէրը քըզ նհէտ, պարի ճանապարհ ասից, հու հուացաւ: Եքս էլ
սերաս հուացած, չիւնքի էն կլխանի լհա տկտկամ, վեարը չար նխեշ-
լու, հէտա, աղբաթը խէր, վեարը ընգաւ:

ԱՂԱԲԷԳ:—Ձէ, քամակը լեաւս պերալ:

ԳԻԻՔԻ:—Ապա, այեանը ասմա, թա՛ հուացածը հազըրա, սուփ-
րան քցիմ:

ՔէԱՍԻ:—Հա, հա, շխտ ըրա քմատաղ, բլըմնէն, մհէ, սվուծա-
ցած կըինին:

ՕՉԱՆՁԱՆ:—Կէափի, քմնէ օրըմնս եկալ:

ԿէԱՓԻ:—Երկու օրըմը:

ՄԸՐՏԻՐՈՍ:—Դէ, եկ սուս ըրա Մըրտիրոս: Տղա ստեղան չըու Ղա-
լան իրէք ազըմ ա, էլհա երկու օրըմը քըինիլ չըինըմ, մհէ տու
հանց տեռ էր, վեր իցցուն հզեր վերստը երկու օրը մը եկեր:

ԿէԱՓԻ:—Տղա պա վեր կլեօխտ վէչ մին զատա տիւս չի կեամ,
ըխտի կասիս ըիլի. ըխկի գիւղըմըս հինչաւըմ եկալ. թա լհա կլխէտ
զօու տամ:

ՄԸՐՏԻՐՈՍ:—Վեր լափ ղուշին թեաւն էլ եկած ըինիս, երկու
օրըմը զատ չըինիլ:

ԿէԱՓԻ:—Տղա պա վեր հանց զատաւ եկած ըինիմ, ղուշին ա-
նա էլ շիւտ թուչի, էն չախը հինչ կասիս:

ԱՂԱԲԷԳ:—Ձեր արենըմ ասըմ խօխէք, իմ արեւը, ըխտի վեր
էտա նաղլ անըմ, մին սհաթըմն էլ եկած ըինի, էլհա կը հուտվա:

ՕՉԱՆՁԱՆ:—Լեաւ, լեաւ, դէ ասէ մին տեսնանք. հինչաւս եկալ:

ԿէԱՓԻ:—Հինչաւըմ եկալ... վըգ օն ան:

ՔԷԱՍԻ, Աղաբէգ, Օհանջան:—Հին, ան... վրդօնա... վագօնը վերն ան
 ԿԷԱՓԻ:—Հինց ասիմ վեր կլտու ընգնիք: Թա կասիմ կիւմաշա,
 կիւմաշու նման չի, Թա կասիմ արչա, արչու նման էլ չի, հինչ կլինէս
 ցվցնիմ է, մին զեռ ճանապարհ: Էս օթաղս կա վէչ, էս ութաղէն
 մշանք, իցցուն ութըղէն հէնա հէաքվան կապած: Աէր ծկլթամա,
 տափը տիւրիւր ա կեամ: Ընդրա տօնը չի քանդվի, ղուշը հինչ նեա-
 քեարեաեա, զիւլլան հինչ ղալաթ կանէ հետան հսնէ: Էս ըթուղնե-
 րէն մաշին, վէր նստումս, հէնա ըկուշկէք օնէ, ըկուշկեցաւը վէր Ե-
 շըմշը, Քէաս-ախպէր, ճնրպարէն ճատերը, սարերը, քօլերը, հինչ
 ասիմ, զիւլլիւ նման աշկէտ ըռաշկաւը Թուշըմն: Ճնրպարէն էլ, ըս-
 անդ-ընտեղ հէնա մարթիք կղնօտած կնըչ-կեարմիւր բըջղընէն ճոքը-
 ներէն, վէր լհա օղըմա, Թա ճնրպարան, տիւս կեա, դէաստի բայ-
 դաղը պցըրցնումըն, էլհա իւրան տեղաւը երըշմիշ ա ըինըմ:

ՔԷԱՍԻ:—Տղա պա հինց սերտ ըրեր ըտեղ նստեցէր:

ԿԷԱՓԻ:—Խէ, մըրիգեամ մինակ էս ի, ինձանա կման հէնգ հզեր
 մարթ էլ կար:

ՔԷԱՍԻ:—Փնոք քեղ Աստուծ, —Դէ, մուտացէք խօխէք հոացա-
 ծը սառւմա, հը', հը' մուտացէք: Նավաշ ըիլիք, հէալա, մին ըրա-
 ղան նհէտ մին-մին քըրցինք: Կէափի, փունէ:

ԿԷԱՓԻ:—Ձէ, առաչ տնատեարը կը խմէ, ետնան ղունդնէն:

ՔԷԱՍԻ:—Դէ վէր ըիտի ա, չրսը-պիւլիւր, սաղ ըինիք օրախ: Պա-
 րաւ —հըրպարի ըս եկալ, Կէափի, կեայիւտըտ պարի ըինի: Խաշին
 զօրու թիւնը ձեր տանան ոչ պակաս ըինի, պարով Թիւնիւն փասկիւ,
 մին սերուն հարս պիրիս:

ԿԷԱՓԻ:—Մառաչընք, Քէաս-ախպէր, պարով տու էլ Գիւքիւն
 փասկիւ:

ՔԷԱՍԻ:—Դէ, խօխէք, ինք կալիք, հը', հը', Աղաբէգ, Օհանջան,
 տղա հմէցէք բըղինք անէլ, մօրէնց քաշվիլ մէք, ձեր տօննա:

ԿԷԱՓԻ:—Ա՛յ աւաղ կէնա մեր շէնը, անջախ մին բերանս համ
 տեսաւ. էն քնդվածէն վէչ հացըմը աղ կա, վէչ շըրմը: Աէր օրը
 օթ հաց օտիս, էլ հա չըս քշտանալ:

ՔԷԱՍԻ:—Խօխէք, էտ խէ Թէամբէալըք տիւրիւր կեամ: Գուքըք
 դիւղըմ, բեղմա կէվաթը Թմըղցնիք, Թա չէ վէր մնա, կլտընեբէալըմ
 ըծիւական: Հը, Օհանջան, Աղաբէգ:

ՕՀԱՆՋԱՆ:—Ձէ, Քէաս-ախպէր, շատ կերէ, Աստուծ սուփրատ
 լիզը պահէ:

ՔԷԱՍԻ:—Դէ, ա Գիւք էք հիւքէ սուփրան, քմատաղ, Կէափ-
 ախպէր, սկսէ տեսնանք, էլ հինչս տեսալ:

ԿԷԱՓԻ:—Տղա խէ, խօսելը փողրաթըմ ըրալ, մհէնգ էլ տուք
 խուսեցէք էս անճուկ օնիմ: Օհանջան, Աղաբէգ, խէչըք զրիւց անըմ:

ՕՀԱՆՋԱՆ:—Բալամ, դէ մոնք հինչընք տեսալ, վէր հինչ խօ-
 սինք, շէնըմը հինչու վէր կա, տուք տեսալըք, էլ էս հինչ ասիմ:

ՔԷԱՍԻ:—Պա քու տօնը շինվի, տղա մին պընկլ ասէ, մին հէ-
 աքէաթ ասէ. պա էս զեռ քշերս հինց անցկըցնինք:

ԱՂԱՅԻԳ:—Քէաս-ախպէր, տու քեօհնա մարթա. լեաւ հըրթնէ
 կը գիրաս. գեալ սեանեա մինը տու սկիս, խօխէքն էլ հվեասի կընգնին:

ՔԷԱՍԻ:—Բաշուստա. Դէ, անճուկ դրիք, հը', հը' —հը' —հը':
 Ըինըմա-չինըմ մին շէնըմ մին հարուստ մարթ, իւրան քիւփեաթաւը:

Անցա կենըմ մին քանէ տարէ, էտ մարթը քըսիւանըմա, քիւփաթն
 էլ լօխ կտօրվումըն, մնամն չորս ախպէր, իրեք քուր, էլ իւրանց շէ-
 նըմը ախշիկ շըինըմ, վէր էտ տղէքը փոակվին, ճըրնէն կտրըմա իւ-
 րանց քվերցը երըաւն փասկվում: Քվերցը մինը մէծ ախպէրնա ինքօ-
 նըմ, մինն էլ ընդրանա պուշուրը, տակէն մնամա երիւ ախպէր, մին
 քուր: Ըտրանց մաշը կուեա ընգնըմ. էն ասըմա, եսըմ ինք օնըմ, էն
 մինը էլ ասըմա՝ չէ, եսըմ ինք օնըմ: Մեծ ախպէրը տեսնըմա, վէր մաշ
 տեղ ղըմղալա ընգնելու, ասըմա՝ ախպէրը, զիտաք հինչ կան, կուե
 ընեյաւ զատ չի տեռնալ, ըրիզան էլ քեցէք փուլ ըշխեցէք, ճը-
 դանա վէրը-վէր լեաւ խօնչա կ'պիրի, ընտիւր կտանք: Աեաւ. էտ եր-
 կու ախպէրըք հըբգնէն ուսընեբանըն քցըմ, մինը տէսա քըինըմ—

մինը տէն: Առտ պիւջուրէն անըմը Փուլաթ ա ըինըմ, ամմա էն մի-
 նինը՝ Մէաթէալ: Փուլաթը շէնան տիւս ա կեամ, մին ճմուկու մաշաւ
 անց կընալիս տեղը, տեսնըմա մին քանէ խօխէք, շիւրընէն հանած
 կեալըմ, լղանըմըն, ինքն էլ մուտանըմա կետան, հէաբգեան վէր ա տը-
 ինըմ, կետէն դրաղէն նստում, հու Թմաշա անըմ: Էտ վէարըմը, կե-
 տը վրարումա, մինէյա տեսնըմ, ջրին մաշին մին սերուն-նախշուն օց.
 էն լղանող խօխէքը, վէր տեսնըմն, փունըմն էտ օցէն գիրաւ հաղ ա-
 նըմ, չըչարըմ, վերչը հէաքիւն կտրըմ: Փուլաթը, վէր տեսնըմա, խեղ-
 ջը կեամա, էտ խըխօցը ըիրայ կղուումա, օցը ճոքներան ինք օնըմ,

հէաբգեան քցում, հու պիւրում տօն, ինքն էլ քըինում հըքիմին ետ-
նան: Հէաքիմը կեամա ըտրա տօնը, տես-տէն խըկօտումա, ազառու—զատ
չի ըրում: վերչը հըցընումա թա՛ «ա տղա, պա ազառուտ հօր ա»
Փուլաթը հըկեան նհէտ տիւս ա օնում օցը, թա՛ էս ա ազառուս,
ըստիւր հէաքին սղըցրու, մին ըլթավա օնիմ, ըզէն քեզ կտամ: Լեաւ,
հաքիմը սղըցնումա օցէն հէաքին, ըլթավան եր օնում քըինում: Մին
քշէր, էտ տղան տանը նստած փիքըսնում: թա՛ ալեր, հոնց անիմ,
ըշտեղա ճարիմ էնքան փուլ, վեր էտ ախջիղը ծեռքաս ընգնէ վէչ:
էս փիքըմը-ըինի, քունաւ ա ընցնում, օցն էլ, տանը մին քիւնջըմը
ծըլըծեալ վեր ընգած ա ըինում: Քշերէն կեսըմը-ըինի, էտ տղան զիւր-
թնանումա, տէս ու տէն ըշըմ, տեսնում տանը քիւնջըմը նհէտ մին սե-
րուն, զրթարված ախջիղ վէնը կացած, վեր լհա աշխանա ընգնում,
վխութիւնան, եօրղանը կլխան ա քաշըմ: Ետնան, էտ ախջիղը, ետա-
տեռնում, թա՛ «ա տղա, վախելմէ, էս էն օցնում, վեր տու պերէր սղը-
ցրէր: Ես ուցերէն թքւերէն ախջիղնում.էս նան իմ ախպէր կետըմը
լղանում տեղը, ջիւրը վրարից, իմ ախպէր շիւտ տիւս եկը. ըզատվից,
էս կրեցէ հուչ: ջիւրը քշից-պերաւ էտ մարդիմազար խիօցը ճէանգը
քցից: Ըռութանա շիւտ երկըկենաս, էս էլհա թլըսիմ կը կարթիմ
օց տեռնում, կըքցիս ինձ հըբզիղ մաչը, տանիս իմ հօր կօշտը Եմ
հէար, հէնա մին կրանու մաչի. կրանաւը, վեր նի կըմնիս, հէնա կը-
տեսնաս իմ հօր-իմ մօր թքւերէն թախտէն նստած: Տու մղակումը
վէնը կըկենաս, էս նի կըմնիմ մաչ ղօլ, էտ լօխ իմ հօր նաղը
կանիմ, ետնան, իմ հէար թլըսիմ կը կարթի, մարթ տեռնա, քգնհէտ
կ'սկսէ ինսանու լիւզվաւ խօսէ: Քըզանա հըցընելուա, թա՛ հինչս
օզըմ, տու զատ չի օզիս դեռ. վեր շատ զօռ կ'անէ, կասիս հէնա լիւ-
վէտ տակէն մին մազ կաչ, ըզէն ինձ տօք: Գիղան էն մազը հինչ
մազ ս, ըշխարքըմըս հինչու օզիս, կտայ»

Ետնան, էտ տղան, էտ ա տեռնում, թա՛ պա էս հոնց քըինիմ,
վէչ ճնայանում ճնանչըմ, համէլ ջնըվրնէ, օցեր պտահին, ինձ կօլ
տան, պա հոնց կանիմ.—«Վախելմէ, ա տղա» օցնասըմա «ճնայան էս
նհանչ կտամ, կլեօխս դըբի ըշտեղ վեր մեկնիմ, դըբի ընդի կըքիսիս.
համէլ, վեր հինչ թէալիւր ճանալար էլ պտահէ, վախիս հուչ, լհա
վեր ինձ տեսնան, քեզ երկօնին կլխըներէն երրա տանին» Էտ տղան
էլ կը կարէ աշկը հօփօնէ: Ել հինչ կլխնէտ ցվըցնիմ. մին թեահ-

րաւ, վեր լիււցնումա, երա կենում օցէն քցում հըբզին մաչը, իրեւէն
խընհանում, հու եալլա:

Շատա քըինում, խրեգա քըինում, էտ Աստուծա զիղում: Սխտը կըլ-
խանէ դեօվերն ջհըմ, ըժղըհէքն ջհըմ, հինչ ասիմ է, հանց ջը-
նըվրնէ, վեր իցցուէ մարթ սաղ-սաղ կօլ տան. լհա վեր օցը հըբ-
գէան կլեօխը նհանչ չի տան, էտ տղէն վէններնըն ընգնում լիւզ տամ,
շըլակըմ սրերաւը, ձիւրերաւը անց կցընում: Վերչը, էտ տղան հանումա
թքվերէն մէանգզիլը: Վեր կրանաւը նի չի մննում, վխութիւնան մա-
զերը բիղ-բիղ վէննըն կենում. օզըմա, թա էտ տեռնա, ամմա դէ էլ
տեղը չըինում, իրեւէն խընհանումա, նի մննում, մղակէն ըռաչկէն վէն-
նը կենում:

Էտ վէարըմը, օցը հըբգեան տիւս ա կեամ. լհա վեր հէարը, մա-
րը անսնմըն, դէաստի երըն կենում ըրխօթիւն անում, մին-մըխուէ կե-
օեաւ ընցնում, մին-մըխուէ լիւզ տամ. ետնան, մին սհաթ քըիմի մին-
մըխուէ նհէտ խոււրմ. խուսելան ետը, էտ տղան եշըմա տեսնում, թախս
տէն երրա մին թքաւէր նստած, ինսանու սփաթաւ, կվազանը ծեռ-
քէն, թեաքը կլխէն, մին խօքաւ, աղաթին թքաւէր ըիլի: Ետնան,
հունց վեր թքւերէն ախջիղը ասալ ար, ընդի էլ ասըմա Քքաւէրը,
վերչանք հըցնումա էտ տղէն, թա՛ «հինչ կօզիս ինձանա, ա տղա»
Փուլաթը ասըմ ա, թքաւէրը, ապրած կենա, զատ չըմ օզըմ վերչը,
վեր շատ զօռ ա տամ, Փուլաթը ետա տեռնում, թա՛ արէվեր ըիտի ա,
թքաւէրը սաղ ըինի, հէտա լիւզվէտ տակէն մին մազ կա, ըզէն ինձ
տօք: Վեր մազին անըմը լըմա թքաւէրը, մաննը կծըմա. ետնան, ե-
տա տեռնում, թա՛ «ա տղա, տու ըշտեգայըս զիւրըմ, վեր իմ լիւզվէս
ասկէն մազ կա, էտ զիւրըմըմ, իմ լեաչառ ախջիղս կըինի ասած
քեզ. էն մազը շատ թնգակին զատա, ամմա, դէ վեր խօսկմ տալ,
ճար չի կա, բեղմա քեզ տամ. ամմա հէսա ասըմըմ. աշկէտ լիւսին
նման բղիս պահել, չիւնքի, էտ մազին անա հինչու օզիս, դէաստի
կտա, ինքնալ քըինի, Դերը քըզ նհէտ.» Փուլաթը մազը ինքօնում,
տիւս կեամ սարէն կլեօխը, եշըմա մազին, թա՛ գեալ սեանեամ, մին
փօրցիմ, տեսնամ էս մազը կը կարէ տանէ ինձ էս սհաթ իմ մէանգ-
զիլս: Մազին եշըմա, ասըմ՝ «ս մազ, էս չուք ճնայան էս կարել-
չըմ քըինիմ, տար ինձ իմ մէանգզիլս» Զրու խօսկը տեղ տալը, աշ-
կերը պենումա տեսնում իւրան տանը նստած. մնամա լափ ըրմացած.

ետնան, մազան պաշտման ճկատէն տրինըմ, թա՛ «ա մազ, դէ վէր ըի-
տի ա, քզանա մին թքւերու ըմարաթ կօզիմ, իւրան զըրվշներաւը,
փըջտուններաւը, տեսաւը-տեսնաւը, մին սերուն էլ խօնչա, վէր հանցու
էս քշեր նշան տառի: Լհա էս ասելն ա, մըինէլ ա տեսնըմ, մին հանց
ըմարաթ—մին հանց ըմարաթ, վէր հինչ ասիմ, պատերը սէալթ մէ-
առ-մէառ քարէ, պցրթիւնը հալալ չրու երգինքը, իւրան ամմէն
սարքավը. մին սերուն խօնչա էլ հազր, ընդեղ վէր տըրած:

ԱՂԱԲԵՒ:— Դէ հօրա, ըիտի մին մազ էլ Աղաբէգին ջհանգը
ընդնէ, հինչ կրինի:

ՄՐՏԻՐԱՍ:— Ընդուճիտ քամակը թա՛ կ'տեսնաս, էն մազան էլ
կ'տեսնաս:

ՔԷԱՍԻ:— Հա, ետնան Փուլաթը մազը տըրինըմ լիւզվէն տակէն,
հանցու վէր կորչի հուչ, խօնչան էլ մին զըրվաշու կլխէ ա տըրինըմ,
դըբի մեծ ախպօրը տօնը քըինըմ: Մեծ ախպէրը վէր տեսնըմ, «տղա»
ասըմա «էս էրկու օրըմըս էսչունը դեօվլեաթը ըշտեղա քըթիր, չըի-
նի վէսկու մէադանս քըթէալ:

Փուլաթը ետա տեսնըմ, թա՛ ախպէր, էլ հրցնելու վախտ չի,
ախջիզը բեր ըստեղ, դեօվլաթա ըիլի, ըշտեղա վէր քթալմ. հեալ-
բեաթ մին օր նաղը կանխմ:

Մեծ ախպէրը էլ խօսկ չի քթէնըմ, թա՛ ասէ, աղջիզը պիրը-
մըն, առուք-փառուք փաակըմ. Փուլաթը ինքօնըմ, կեամ տօն:

էն մին ախպէրը, վէր օզըմար ինքը փասկվէ, դէարդ ընելան խրէ-
ղա մնան, թա՛ մեռնէ: Ենքը-ինքը մետք անըմ, թա՛ «այեր, էս էր-
կու օրըմըս, էսչունը դեօվլաթը էս ըշտեղա քթաւ, ես հունց քը-
թաւ. ես, հետա իրեք օրա կրեցալ չըմ, թա՛ մին շէահի էլա ըշխա-
տիմ, պա էլ հօրըմ՝ ըշխարքէս ըիրեսեն ապրըմ, վէր ինձանս պու-
ջուր ախպէրը ըինդի բուրալի ապրըմ հերիք չի, հրանացուս էլ
ճեռքաս խից:

էտ խեղջը տէս ա ընդնըմ, տէնա ընդնըմ, թա՛ մին զիղա էտ
պէնը, զատ չի տեսնըմ: Վերչը, էտ շէնըմը մին պառաւ կնէգ ա
ըինըմ, ինքն էլ շատ իմաստուն, համէլ, վէր թլըսիմա կարթոււմ, դէ-
աստի կատու ա տեսնըմ. կեամա էտ աղէն կօշտը, թա՛ «ա տղա,
հինչ կտաս ինձ, որ էս թաքուն քինիմ Փուլաթէն տօնը, հինչու
կա, տղվրտեղ գիտամ, կեամ քեզ մին-մին ասիմ: էտ տղան ասըմ ա

դէ հօրա, ա պառաւ, վէր ըիտի մին պէն անիս, հինչու օզիս կը-
տամ: Վէր պատառ մթնըթօնըմա, պառաւը թլըսիմը կարթըմա
կատու տեսնըմ, ըվըշ-եալաշ քինըմ Փուլաթէն տօնը նի մննըմ: էս
վէարըմը, Փուլաթէն իւրան հարսը նստած հաց օտըմըն ըինըմ:
Փուլաթը, վէր կատուէն տեսնըմա օզըմա տիւս քցի, հարսը թօղըմչի,
ասմա՝ «մեղք ա, տիւսմէ քցիլ, թո՛ղ պատառ փլաւ տանք օտէ:» Փլա-
ւան էլ մին քթեօլ ամըմա առաշը, կատուն սկսըմա երվըշ-եալաշ
օտել: Հացը վէր հվաքըմըն, հարսը ետա տեսնըմ, թա՛ «ա մարթ,
մին ասէ տեսնամ է, էսչունը տեօվլաթը ախր ըշտեղա քթիր:» Փու-
լաթը վէրչանք օզըմա ասէհուչ, զատ չի տեսնըմ, կնէգը ըզաշանք-
պղատանք ա անըմ, վերչը, սկսըմա մին-մին նաղլ անըմ, կատուն էլ
ընդեղան անձուկ ա տընըմ: Հէչ: Մարթու կնէգ, պենա բէլխաբար,
երըն կենըմ քօնըինըմ: Վատուն էնքան վէննա կենըմ, վէր խոըմքօցը
ընգնոււմ. ետնան, եվըշ-եալաշ մուտանըմա, հէաքին կօխըմա Փու-
լաթէն քթածակը, Փուլաթը բիրդան սէաբրա կեամ, մազը պրանան
վէրա ընգնըմ, կատուն շանթոււմ, հու Քէասպար պնէք անըմ: Փու-
լաթը, պէնա բէլխաբար, ըուլթանայ երակենըմ, քեօ՛ղխան ծին նս-
տըմ, թէառուան դուշը եր օնըմ, քինըմ վէրս:

էն քաւթառն էլ, մազը տանըմա Փուլաթէն ախպօրը տամ, մին-
մին էլ նաղլ անըմ: Մէաթէալը, եր օնըմ մազը, եշըմ, ետնան ասըմա՝
դէ, մին փորցիմ տեսեամ էս մազըմը հինչ հըինար կայ: «Ա՛ մազ,
էս սհաթէս քզանա կօզիմ, Փուլաթէն ըմարաթը հանց տեղ քցիս,
վէր վէչ յետնը ըրեա, վէչ էլ թէփնուր: Լհա էս ասել լըբէ-
աստ, Փուլաթէն ըմարաթը, տանաւ-տեղաւ կորչըմա: Մէաթէալը ուր-
խասնըմա, էտ պառաւն էլ պիւրըմա իւրան քշտէն հաց տամ—շօր
տամ, պահըմ:

Փուլաթը վրսըտեղա կեամա, տեսնըմ ըմըրաթէն ըիսկի շուլ-
թիւն էլ չի ըրեում, հայ տէս-հայ տէն, զատ չի տեսնըմ: Վերչը,
մաննը տանըմա պերանը, թա՛ մազը տիւս օնէ, տեսնըմա ըշտեղ,
վէչ մազ կա վէչ էլ վազ. ետնան, դէաստի կլխու ա ընգնըմ, վէր պէ-
նը հինչըմնա: Վէրչանք ըզաշանք, մըիննաթ ա անըմ ախպօրը, զատ
չի տեսնըմ, վերչը տեսնըմա, վէր էլ ճար չիկա, երակենըմ էլհա
դըբի օցը քըինըմ: Վէր կրանաւը նիա մննըմ, օցէն թքաւէրը, էլհա
ինսանա տեսնըմ: Փուլաթը մին-մին նաղլ անըմ, թքաւէրը կլեօխը տիւ-

րիւր տալաւ ասըմ ա՛ւ ւն տղա, էն մազը ջօկ մազար, հինչ կանխ, վեր դէպորը գիղացալ չըս, ընդիւր անա պեցիր էլ զատ չօնիմ: մի քար ծնիմ, ղորթա, մազին տեղը տալչի, ամմա դէ ինքիալ քեզ տամ, բէալքեա մին ճար անխա էտ քարը գիտաս հինչ քարա, էտ քարէն, վեր ասիս. օն քար, էս շէնիս տները կընդ-կընդ էրի, մօխեր շինի, դէաստի կէրիս»

Փուլաթը քարը ինքօնըմ, կլեօխ տամ թքւերէն կեամ շէնը: Ետնան, ախպօրը երրա խաբարա ըղարկըմ, թա՛ւ քրեցէք մազս քըղ-ցրութիւնաւ պիրի ինձ տայ, թա չէ, շէնը կրակ կ'տամ»

Մէաթեալը էտ խաբար պիրողներէն մին լեաւ քեօթակա տամ, ետնան էլ, թա՛ւ քրեցէք ձեզ ըղըրկողէն ըսեցէք, հինչու վեր ծեռքաւը կեամ ա, անէ. մազը, էլ ըրազումն էլ չի տեսնալ»

Փուլաթը, վեր էտ խօսկերքը լսըմա, քարը եր ա ծնըմ ծեռքը, թա՛ւ ւն քար, տեսնըմըս, վեր քղցրութիւնաւ զատ չի տեսնըմ, դէ սկսէ շէնին առուէ կլխան մին-մին մօխեր շինի տները: Ե՛հա էս ասելն ա, մնէին տեսնըմ կրակէն ալաւը երկինքը ըլիւած: Ե՛կնին մարթիքը վեր տեսնըմն, էն սհաթէն թուփըն տեսնըմ, քըթխուդէն էլ եր ծնըմ քինը: Մէաթեալին կօշտը ըղաչանք-պղատանք ընելաւ, մազը ինք ծնըմ պիւրըմ Փուլաթէն տամ, թա՛ւ քմատաղ, ինքիկալ քու մազը, մեզ կտօրել մէս:

Փուլաթը մազը ինք ծնըմ, քարէն էլ ասըմա, վեր էլ կրակ չիտա, ետնան, ետ ա տեսնըմ, թա՛ւ օն մազ, դէ իմ ըմարաթը ըշտեղ վեր տարալս, էս սհաթէս մաչին պեր ըստեղ» էս ասել լըբասդ, տեսնըմ ա ըմարաթը էլհա իւրան տեղը վէնը կացած. մնըմա տօն, հարսեն էլ տեսնըմ սաղ-սլմաթ, մազնան քարն էլ հանց տեղա պահըմ, վեր ղուշն էլ չի կարէ կօղքաւը անց կենա, ինքն էլ իւրեան հարսէն նհէտ ղինջ-սերուն ապրըմըն: Ե՛կ, երկինքան չորս խնձօր վեր ընգնէ. մինը՝ ըսողեն, մինն էլ կտանք Կէափուեն, չիւնքի շատ զատեր նաղ ըրաւ, մինն էլ կտանք հիւր, —հա, մինն էլ կ'տանք ընդիւր, հու վեր հէսա մին հէաքեաթ կասէ. դէ տակէն մնամա մինը, ընէլ պժընեցէք, խօխէք. ես հու իմ պարտկաս պրծէ, դէ հու վեր գիղըմն ասէ:

ՕՀԱՆՁԱՆ:— Խատօրնէլ լեաւերը կ'գիղա, Քէաս ախպեր:

ՔէԱՍԻ:— Հա, լեաւ մետս քցեցէր. պելի, սկսէ բաշըվաղեօնըմ:

ԽԸՉԱՍՏՐ:— Վալլա, ըրիսկի մետս չի կեամ վէչ մինը... եափաշ

ըլիք մին տեսնամ.....հն, մին լեաւը մետս ընգաւ. դէ անձուկ տըրի-րիք, հը՛, հը՛, հը՛, հը՛.....

ՄՐՏԻՐՈՍ:— Տղա դէ ասէ տեսնանք է, հէնգ սհաթ էլ հու, հու ա ընելու, հւատա խնձեօրը բղաղըմըտա մնացալ:

ԿՐԱՊԵՏ:— Տղա, հինչ անհեօխեալեա զատս ըլէալ, պա հէա-քեաթ ասօղը բօղաղը թմօցնել չի:

ԽԶԱՍՏՐ:— Ե՛կ, անձուկ դըրիք, սկսըմըմ:

Ըինըմա-չըինըմ մին թքաւէր. ըտիւր մին տղաեա ըինըմ անըմը Մհասուր.....

ՄՐՏԻՐՈՍ:— Պա Մհասուրէ, տղա Մհասուր անըմ կըրինի:

ՔէԱՍԻ:— Մհասուրը վեր նա, մին տղա կա մեր շէնըմը անըմը Զկէն. ըրտի անըմնէ շատս ըինըմ:

ԽԸՉԱՍՏՐ:— Հա, էտ տղան շատ փուչ ա ըինըմ. թքաւէրը մըու-նէիս տեղը, կանչմա իւրան կնգանը ասըմ՝ ւն կնէդ, էտ տղան. տես-նըմս, փուչ տղա եա, իմ մնելան ետը, խաղնաս լօխ ցրեա տըլեա-կան, ինքն էլ քսիրընալուա, շան օրը ընգնէ, ետնան, ուղեյու ա, վեր իւրան սպանէ, էսչախը կասիս, հէնա թվլէն պատէն մին մէխ վեր տված, վեր քեանդիրը քցի, էն մէխան, կախ ընգնէ. էն մէխին տա-կէն հէնա օխտը կարաս վէսկէ կեղած, վեր կօղի թա, կախ ընգնէ, մէխը տիւս կրկեա, վէսկէն վեր կ'տեսնա. երկօնէ էլհա փչըցնէ: Վեր էլհա կօղի, թա իւրան սպանէ, կասիս, հէնա թվլէն մղակէն տակէն մին ղազան կա թաղած, ըզէն տիւս ծնէ. ղղղանէն մաչին էլ մին վերցակ կա, թո՛ղ էտ վերցակը տանէ ծախէս:

Կնէզը ասըմ ա, լեաւ:

Մին քանէ օր անցա կենըմ, թքաւէրը մեռնըմա: Մհասուրը թօխըր ինքօնըմ խզնէն ջանէն ընկնըմ, սերուն թմօցնըմ, մնամ առ-ուէ սոված: Ետնան, տեսնըմ ա վեր էլ ճար չի կա, թփընչան եր օ-նըմ թա կրակ տա, մարը ասըմա՝

«Վ վերթի, քու հէար ասալա, վեր Մհասուրը օղի իւրան սպանէ, թո՛ղ քինի թվլէն պատան մէխին անա կախ ընգնէ:»

Ե՛տա, Մհասուրը մնըմա թափլան, քինդիրին մին ջօնդը մէխան պենդ կապըմա, էն մին ջօնդնէլ հղլա եա շինըմ քցըմ կլեօխը, թա կախ ընգնէ, մէխը բրդան տիւս ա կեամ, օխտը կարաս վէսկէն ըուաչկէն վեր տեսնըմ: Մհասուրը դէաստի քանդիրը կլխան տիւս ծնըմ, վէս-

կէն հվաքում, էլհա սկսում ըստեղ-ընդեղ քէփեր անում: Անցակենում մին ամէս, վէսկէն պրծնում, մնամա էլհա տիւզնը-ծարաւ. թփրն-չան երօնում, թա էլհա իւրան սպանէ, մարը ասում».

«Ա՛ վերթի, քու հէար ասալա, հէնա թփլէն մղակէն տակէն մին զզղան կա թաղած, մաչին մին վերցակ, ըզէն տիւս օնէ տանէ ծա-խէ:» Մհասուրը պիհրը եր օնում զզղանը տիւս օնում, պերանքը պե-նրմա տեսնում մաչին մին սերուն վերցակ. կոնը տակէն ա տըր-նում, տիւս կեամ բազար. Ղիւքններէն ըռաջքաւը՝ «այ վերցակ աւնոդ, այ վերցակ առնոդ», ծէն տալաւ քըինում: Վէր դիւքանչիքը տեսնումըն, դէաստի ճնանչումըն թքերէն վերցակը: Մինը ծէն ա տամ, թա՛ «այ տղա, հարիւր թման տամ, էտ վերցակը ինձ տօք». էն մինը ծէն ա տամ, թա՛ «այ տղա, էս հզեր թման կ'տամ»: էն մինը—ստասը հզեր կտամ—Մհասուրը հւատում չի. գիղում ա, թա զիբաւ ծաղըն անում. վերչը մին հարուստ դիւքանչի էլ էտ ա տեռնում, թա՛ «այ տղա, հարիւր հզեր թման տամ, էտ վերցակը ինձ տօք». Մհասուրը, վէր շատ նղանում ա, էտ ա տեռնում, թա՛ «այ շան տղա, ծաղը ընե-լու տեղըք քթէնը, հարիւր հզեր մնրթանուց վերցակ կըինի»: էտ դիւքանչին իւրթիւմ-հաւատ ա անում, թա՛ «հարիւր հզեր թման, էս սհաթէս մաչին կտամ»: «՛է վէր կտաս, ինքկալ», ասում ա վեր-ցակը տամ դիւքանչիւն: Ղիւքանչին փուլը տամ ա, վերցակը ինք օնում:

Մհասուրը մնամ ա ըրմացած. ինքը-ինքը մեռլ անում՝ «այնր, էտ մարթը սրսողկալ ա, կլխէն ծի ա քացի տւալ, թա հիւնչ ա իլէալ. վրցակէն արիւն կինը հէնզը-վէց շահի ա, էտ հարիւր-հզեր թմանը ընդիւր հինչի՛ն տւաւ. էս բէզմա էտ պէնը գիտամ. ասում ա, հու-քնում էտ դիւքանչիւն նիւքըրներէն մինին նման շորեր կենում, թա-քուն մնում դիւքանչիւն տանը մղակէն զվումը կաղնում: էտ վէարումը, դիւքանչին կանչմ ա իւրան ըշպաղէն, վերցակը տամ ա ընդիւր, ասում՝ «այ տղա, ինքկալ էտ վերցակը տար մօրթէ, կլեօխը պեր ինձ տօք, մնացածը տու կեր»:

Աշպաղը, վերցակը ինք օնում տանում, թա մօրթէ: էտ վէարումը Մհասուրը քինում ա, ըշպաղէն կօշոր, թա՛ «աղան վրցակէն կլեօխը օզրմ ա»: Աշպաղն էլ ճնանչում չի թքերէն տղէն, գիղում ա, թա՛ իւրանց նիւքըրներան ա, վրցակէն կլեօխը տամ ա Մհասուրէն, Մհա-սուրը ինք օնում, հու Քէասպար պոնք անում:

Պիւրում ա տօն, չաքիւջը եր օնում վրցակէն կլեօխը ճարթում ա, թա՛ տեսնա հիւնչ կա. ման ա կեամ-ման, տեսնում հղողէն մաչին մին տկօղնու մչանք պիւլլիւր քար, եր օնում շուխէն թէքը քսում, թա սրփի, եշում ա տեսնում, ըռաչքէն օխտը ճանափար մարթիք կղն-տած, դզընկնէն ծոքներէն: Ետնան, Մհասուրը հրցնում ա, թա «դուք հոնըք, ըստեղ հիւնչըք անում»: էտ մարթիքը ետըն տեռնում, թա՛ «մոնք էտ քարէն զուլերնըք. էտ քարը հիւրը ծեռքէ վէր ըինի, մոնք, բեզմա ընդրա զուլուղ անինք. հիւնչ վէր օզի, բեզմա ճարինք»:

Մհասուրը ուրխանում ա. երա կենում մի քեօնլեան ծիու երա նստում, զուլերն էլ հետան քցում, հու եալլա. մարը վերչանք ըղա-չանք ա անում, վէր քինի հուչ, զտո չի տեռնում: Ետ ա քինում-խրէզ ա քինում, էտ Աստուծ ա գիղում, հանում ա գիւնիս առու էն ջօնդէն: Վէր ա կեամ մին ծովու դրաղէ, ետնան, զուլերէն ասում ա՝ «այ զուլեր, էս սհաթէս մաչին ինձ հետէ մին թքերու ըմարաթ շինեցէք իւրան ամնէն սարքաւր»:

Ղուլերը մին հանց ըմարաթն շինում, վէր եշիս միթարիտ: Ետ-նան, Մհասուրը սամա՛ «այ զուլեր, ման եկէք, մին հանց սերուն ախջիկ քթիք ինձ հետէ, վէր սաղ ըշխարքու՛մըս ընդրանա սերունը շինի»:

էս ասել լբատո, զուլերը ըշխարքէս էս ջոնդաւը տամըն, էն միտաւը տիւս կեամ. մին լիւսննգու նման ախջիկ պիրում. ետնան, Մհասուրը, մօրն էլ պիրիլ ա տամ իւրան կօշոր. առուք-փառուք փսակվում ա, մին ամէս սեարա-սար էլ հրասնէքըն անում, իւրանց հետէ դինջ սերուն ասարում:

Մհէնզ քինինք դիւքանչիւն կօշոր:

էտ մարթը եշում-եշում, վրցակէն կլեօխը ըրեռում չի. ըշպա-ղէն կանչմ ա հրցնում, էտ խեղջը ասամ՝ «աղա, էն Աստուծը, ըղար-կալում, նիւքարին անալ»: Հայ տէս-հայ տէն, վերչը, էտ մարթը դէաստի կլլու ա ընգնում, վէր պէնը հինչումն ա: Երա կենում, մին քանէ թնգակին քարեր եր օնում, շորերը փօխում, իրեն էլ մօր քսում, առուէ սվցնում, հանցու վէր ճնանչին հուչ, — հղէ ընգնում:

Ետ ա քինում-խրէզ ա քինում, հանում ա Մհասուրէն ըմարաթէն: Ղրբզէն ըռաչկաւը անցկնալիս տեղը, ծէն ա տամ՝ «այ թնգակին քա-

րեր առնող—այ թնդակին քարեր առնող: Էտ վէարմը, Մհասուրը տանը չինըմ. հարսը ասմ ա՛ Վին քինիմ տեսնամ, էտ հինչ թընգակին քարեր առ: Մուտանըմ ա էտ քար ծխողէն, թա՛ «հօրա, մին տեսնամ, հինչ թէաւիւր քարեր ա՛: Էտ մարթը նհանչ ա տամ. ետնան, ետ ա տեռնըմ, թա՛ «էհ, էս հինչ քարեր ա, մեզ մին քար օնինք, վէր սաղ աշխարքս ման կեաս, կարել չըս քթենաս»:

Քար ծախողը ասմ ա՛ «հօրա, դէ մին պեր տեսնամ»:

Հարսը քինըմ ա քարը պիրըմ: Էտ դիւքանչին քարը եր օնըմ, իւրան քարերէն նհէտ խառնըմ, ետնան, խափըմ, մին օրիշ քար տամ, հու հոանըմ:

Հարսն էլ պէնա բէչ-խաբար, էտ քարը եր օնըմ մնըմ տօն:

Դիւքանչին քարը քսըմ ա չուխէն թեքը, տեսնըմ ա զուլերը ըռաչկէն վէնը կացած, ետնան, ետ ա տեռնըմ, թա՛ «ս՛ զուլեր, էս սհաթէս մաչին, թքերէն աղէն տարէք ծովէն իրեսը քցեցէք»:

Մհասուրը, աշկերը պենըմա տեսնըմ ծովէն իրեսէն մին տըխտակու երանստած: Էդ դիւքանչին էլ կեամ ա Մհասուրէն ըմըրաթըմը նստուամ, հարսէն էլ եր օնըմ իւրան կնէզ շինըմ, թքերէն կնգան էլ քցըմ ա մին օթաղ գեօնը քլլըմ, վխութիւնան քարն էլ անիւմ ա լիւզվէն տակէն: Մհասուրէն տանն էլ, մին կատու ա ըինըմ, մինէլ մին պուջուր շօն: Էտ խեղջ հըմնէն, տէսն ընգնըմ-տէնն ընգնըմ, թա մին թէահրաւ քարը էդ դիւքանչին ծեռքան խլին, զատ չի տեռնըմ: Վերչը տիւս ըն կեամ ծովէն զրաղը, եշըմըն տեսնըմ, ծովէն երա մին զատ ա սվէ տամ, ըրկոքան էլ մնըմըն ջրին մաչը, սկսըմ լեղ տալ. Վէր պատառ մուտանըմն, եշըմն տեսնըմ իւրանց տէարը, մին տխտակու երա նստած. վազն տամ, քինըմ վէնները լիւզ տամ: Ետնան, Մհասուրը հրցնըմ ա, թա՛ «էս հինչ պէն ա, տանը հինչ կա-հինչ չկա»: Կատունան, շօնը կընդ-կընդ ասմըն, հինչու վէր պտահալ ար: Մհասուրը ասմա՛ «քեցէք մին թէահրաւ քարը ինք-կալիք»:

Շօնան կատուն ետըն տեռնըմ կեամ տօն. Լհա վէր մթնըմ ա, լօխ քօնըն ըինըմ, կատուն շանը ասմա՛ «շօն ախպէր, տու ախուշ-կէն ըռաչկէն վէնը կաց, ես մնիմ մին թէահրաւ քարը ինք օնիմ, ախուշկաւը վէր քցիմ, զու շիւտ չանթէ, փախեր, ես էլ հետատ կը կեամ»: Շօնը ասմա՛ «բեաւա, կատու ախպէր»:

Կատուն ըվըշ-եաւալ մնըմ ա, մուտանըմ ա էն մարթին, հէաքին կոխըմ ա քթածակը, էտ մարթը բրդան սէաբր ա կեամ, քարը վէրա ընգնըմ պիրանան, կատուն չանթըմ ա, հու ախուշկաւը վէր քցըմ, շօնը եր օնըմ հու պուք անըմ: Կատուն էլհա տիւս ա կեամ, քինըմ շանը հէտան հանըմ: Ջրին մաչին լեղ տալիս տեղը, կատուն ասըմ ա, դէ ինձ տօք ես տանիմ, չիւնքի եսըմ խլէալ էն մարթին անա: Շօնը ասըմ ա, չէ, էսըմ ասնըմ. վերչը, հինչ կըլխնէտ ցվըցնիմ, մին-մինու նհէտ կուեն անըմ, քարը վէր քցըմ ջրին մաչը...

ԱՂԱԲԷԴ: — Պա՛, ծեր վէզը կոտրէ վէչ:

ԽԸՍՍՕՐ—Հա, ետնան, քօռ ու փեշման, քնըմըն Մհասուրէն կընդ-կընդ ասըմ.—հունց ինք կալին, հունց պերէն, վերչը հունց ջրին մաչը քցեցէն: Մհասուրը ասըմ ա՛ «վէչինչ, թէաք էն մրդի—մըզարէն անա ինք կալած ըինիք»: Շօնան կատուն ետըն տեռնըմ:

Մհասուրը մնամ ա ծովէն ըրեսէն. ամմէն օր էլ մին ծիւկնը ջրան տիւս ա կեամ տխտակէն երա ընգնըմ, Մհասուրը եր օնըմ մօրթըմ օտըմ: Էտ օրը, վէր ծիւկնը տիւս ա կեամ, եր օնըմ, թա պջըղէ, տեսնըմ ա էն քարը ծիւկնէն փորըմը. քարէն եշըմ ա տեսնըմ զուլերը քշտէն վէնը կացած. ըտրանց երան կղնուամ ա, թա՛ խէ՛ ըն թուղեցալ էն մարթին իւրան տօնը մնէ: Աուլերը ասմըն՝ «դէ մուք հունց անինք, էտ քարը հիւրը ծեռքէ վէր ըինի, մուք ընդրա զուլուղ կանինք»: Մհասուրը ասմա՛ «դէ, տարէք ինձ տօն»: Աուլերը երըն օնըմ տանըմ տօն. Վէր տանը շէմքաւը նիցա մնըմ, մազերը բիզ-բիզ վէննա կենըմ: Մարընան հարսը սև շեօրեր կեցած, ուէանգնէն էս պատը կտրված, նստած լաց ինըմ. վէր Մհասուրէն տեսնըմըն, երըն կենըմ կօլեաւը ընցնըմ, պըչ-պըչօրըմ, տէս անըմ-տէն անըմ, մին խօքաւ, շատ ուրխանըմըն: Ետնան, Մհասուրը զուլերէն ասըմ ա՛ «ս՛ զուլեր, երկալիք էս մարթին չրու առուէ ըրիք-նակը պցրցրէք, ետնան ընդեղան պեց թուղեցէք»:

Աուլերը երըն օնըմ էտ մարթին խիլա պցրցնըմ. ետնան, ծէնն տամ ընդեղան՝ «աղան, ըմըրաթէդ ըռաչկէն վէր քցի՛նք, թա ծովէն մաչին»: Մհասուրը ասմա՛ «ծովէն մաչին»: Աուլերը վէր ընդեղան պեցըն թողըմ, էտ մարթը կըլսնդրէգի տալաւ, առուէ ծովէն մաչին ա ծեփըմ: Մհասուրն էլ իւրան հետէ գինջ-սերուն ասըմ ա:

Դէ, երկինքան, մ'հէնդ էլ չորս տանձ վէր ընդնէ, մինը ինձ, մնացածն էլ, պելի, հունց վէր օգմըս պժէնի...:

ԱՂԱՔԷԳ: — Ախպէր լեաւ հըրթնէ ըք գիւղըմ. էտ ըշտեղ ըս սվէրալ, Խչատոր:

ԽՉԱՏՕՐ: — Պա ըշտեղ ըմ սվէրալ է. հըաթին հի՞նչ սվերէլ կօղի, ինձ նման մինը ասալ ա, ես էլ անձուկ ըմ տրալ: Դէ մ'հէնդ հիւր նօբաթ ա, թող ըզէն սկսէ:

ԹԻԻՆԻ: — Հերիք ա, խօխէք, իմ քօնս տանըմ ա:

ԿԷԱՓԻ: — Վալլա, իմն էլ ա տանըմ:

ՕՉԱՆՁԱՆ: — Թա կասիմ իմն էլա ամնըմ, հունց անիմ:

ՔԷԱՍԻ: — Տղա, էս վախտ մարթ քօն կընի՞. էքիւց էլ Գրէզի ա, բէն չըք ընելու — զատ չըք ընելու. նստած խօսումընք ըիլի:

ԽՉԱՏՕՐ: — Ձէ, պելի. շատ խուսեցենք. քօն ընիլի վախտ ա: Դէ, խօխէք, երկացէք: Պարի քշէր, պելի, շատ շուրհակալընք. Աստուծ սուվրատ լիզը պահէ:

ԹԻԻՆԻ, Օհանջան, Ըսծօտոր: — Պարի քշէր, Քէաս-ախպէր:

ՔԷԱՍԻ: — Ձեզ լիւսը պարի. պարով եկէք. Աստուծ ճըզ էլ — ճեր խխօցնէլ պենդ ճեռքաւ պահէ. մորէնց քաշվիլը հուչ. ճեր տօնն ա, եկէք-քեցէք:


ԽՉԱՏՕՐ: — Պելի, մոնք միշտ կեամընք. ամմա տու պատառ հեռէրս ման կեամ. էքիւց ըրիւզիւնն էլ մեր տօն եկէք. Պելի, կ'կեաս հն:

ՔԷԱՍԻ: — Բաշխատա — բաշխատա, կ'կեամ:

ԿԻԻՔԻ: — Ապն, տօնը քլլի՞մ:

ՔԷԱՍԻ: — Հա, քմնատաղ:





Մտնում է Քիշիս Անդրոնական, իսկ հագու՝ Քառաչեանի
գրախնամանոցներում:

Ստոր քաղաքներից ղիմում են հեղինակին հետևեալ հասցեով:

Темиръ-Ханъ-Шуру

Инженеру Авшарьянцъ.

« Ազգային գրադարան



NL0108401

